Պատմության մրցույթներ Հայաստանում, Բելառուսում, Վրաստանում, Մոլդովայում և Ուկրաինայում 3.0

Պատմության մրցույթ

ՄՈՌԱՆԱԼՈՒ ԵՎ ՀԻՇԵԼՈՒ ԱՐԱՆՔՈՒՄ

Խորհրդային և ետխորհրդային հիշողության լանդշաֆտը համայնքներում և ընտանիքներում

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

ներկայացված աշակերտների կողմից

Supported by Federal Foreign Office

CIVIL SOCIETY COOPERATION

«Պատմության մրցույթներ Հայաստանում, Բելառուսում, Վրաստանում, Մոլդովայում և Ուկրաինայում 3.0» ծրագրի շրջանակում 2022թ. հունվար – ապրիլ ամիսներին Երևանի, Տավուշի և Շիրակի 32 դպրոցների աշակերտներն ու աշակերտական խմբերը կատարել են հետազոտական աշխատանքներ «Մոռանալու և հիշելու արանքում. խորհրդային և հետխորհրդային հիշողության լանդշաֆտը համայնքներում և ընտանիքներում» ընդհանուր թեմայի շրջանակում: Աշակերտները ուսումնասիրել են իրենց համայնքը, գտել խորհրդային շրջանում կառուցված, շահագործված կամ վերափոխված տարբեր շինություններ, հուշարձաններ, իրենց ուսուցիչների աջակցությամբ կատարել են ուսումնասիրություններ գրադարաններում, արխիվներում, բանավոր պատմության մեթոդով հարցազրույցներ են վերցրել իրենց ընտանիքի անդամներից, համայնքի բնակիչներից, շինությունների / հուշարձանների հետ առնչություն ունեցած մարդկանցից և փորձել են ամբողջացնել իրենց հետազոտություններն ու ներկայացնել դրանք պատմության մրցույթին: 2022թ. ապրիլի 30-ի (աշխատանքների ներկայացման վերջնաժամկետ) դրությամբ մրցույթին ներկայացվել են 46 հետազոտական աշխատանք (թե՛ խմբային, թե՛ անհատական), որոնցից մեծ մասը՝ 30-ը, վիդեոպատմություններ են, 16-ը՝ ֆոտո պատմություններ, պաստառներ, շարադրություններ, սահիկաշար, թատերական ներկայացում, փողքասթ, առցանց գիրք, այլ: Ներկայացված աշխատանքներից 14-ը ժյուրիի գնահատմամբ ընտրվել են որպես լավագույն աշխատանքներ 3 անվանակարգերում.

Լավագույն աշխատանք
1. «Մոռացված պատմության հետքերով». Դիլիջանի Իմպուլս գործարան
2. Կլուբի եկեղեցին
3. Ազատության պողոտայի էվոլյուցիան

Լավագույն հետազոտական աշխատանք
1. Ժամադրություն քանդած «Նորք» կինոթատրոնի մոտ և 3D մոդելավորում
2. Ռուսական դպրոցի ճակատագիրը խորհրդային և հետխորհրդային Դիլիջանում
3. Մեր գյուղի անվանափոխության պատմությունը

Հատուկ մրցանակներ
1. Լորիսի աղբյուր – Լավագույն անհատական աշխատանք
2. Մայր Հայաստանը խորհրդային և հետխորհրդային տարիներին – Լավագույն մեդիապատում
3. Ժամանակի վկան – Լավագույն անդրադարձ ժողովուրդների բարեկամության թեմային
4. Ռոսիա կինոթատրոնը խորհրդային և հետխորհրդային տարիներին – Լավագույն արտահայտչամիջոցի կիրառմամբ աշխատանք
5. Երևանի բարեկամության մետրոն – Լավագույն քննադատական անդրադարձ հետազոտվող հարցին և Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի համակրանք
6. Լենինական – Գյումրի երթուղի – Ժյուրիի համակրանք
7. Ղարիբջանյանի մոռացված և անտեսված էջերը – Ծրագրի փորձագետի համակրանք
8. ԽՍՀՄ ժամանակաշրջանի բացահայտման հետքերով – Ժյուրիի համակրանք

Այս առցանց գրքույկում ներկայացված են բոլոր աշխատանքները: Այս գրքույկը հետաքրքիր ռեսուրս կարող է հանդիսանալ «Պատմության մրցույթներ» նախաձեռնության հետագա փուլերի մասնակցիների, ինչպես նաև հետազոտողների համար:

Քանի որ մրցույթին ներկայացված աշխատանքների մեծ մասը տեսաֆիլմի ձևաչափով է արված, բոլորը հավաքվել և ներբեռնվել էն Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի Հայաստանյան գրասենյակի յութուբյան ալիքում: Տեսաֆիլմի ձևաչափով ներկայացված բոլոր աշխատանքները կարող եք գտնել հետևյալ հղումով.

https://www.youtube.com/channel/UCXMCBgUgw5xhD5JlTnzKbUw/videos



Ստորև ներկայացված են բոլոր այն աշխատանքները, որոնք ներկայացվել են այլ ձևաչափերով (շարադրություն, ֆոտո պատմություն, պաստառ):

«Համբարձման հաջորդ կիրակի…»	
Խմբային աշխատանք, ֆոտո պատմություն	
Մարզ ***Համայնք*** ***Դպրոց*** ***Ուսուցիչ*** ***Խմբի անվանում*** ***Աշակերտներ***	Արագածոտն Լուսագյուղ Լուսագյուղի միջնակարգ դպրոց Արև Հովհաննիսյան «Նիգ Ապարան» Տիգրանյան Նարեկ, Հովհաննիսյան Հասմիկ, Ստեփանյան Օֆելյա, Անդրիասյան Միլենա, Հովհաննիսյան Էրիկ, Ասատրյան, Արտակ Սիմոնյան Ալվարդ

Համբարձման հաջորդ կիրակի…

- Օֆե՛լյա, տնայինդ բե՛ր:
- Ընկե՛ր Թովմասյան, չեմ հասցրել գրել. երեկ ընկեր Հովհաննիսյանի հետ գնացել էինք հարցազրույցի:
- Պա՛հ, գլխներիս Գագիկ Շամշյան (գյուղում հայտնի լրագրող) եք դարձել:

Դադարից հետո:
-Ի՞նչի մասին էր ձեր հարցազրույցը:

Կարծում ենք, այլևս գաղտնիք չէ, որ խորհրդային կարգերի հաստատումից հետո կոմունիստական կուսակցության ապազգային գաղափարախոսության տարածման ու ամրապնդման համատեքստում եկեղեցին դիտվեց որպես ազգայնական հաստատություն և նրա հանդեպ սկսվեցին հալածանքներ։
Հակակրոնական քաղաքականության վճռական քայլերից է եղել եկեղեցիները հասարակական նշանակության կառույցների վերածելը։ 1930-ական թթ. գյուղի եկեղեցին ևս այդ բախտին է արժանացել և վերածվել է կաթնամշակման կենտրոնի, հետո՝ հացահատիկի պահեստի։

Մեր հետազոտական աշխատանքները սկսեցինք եկեղեցու կառուցման հետ կապված հարցերից...

Առաջին զարմանքը, երբ զրուցակիցներից մեկը՝ Իգիթ Մաթևոսյանը՝ վանքի վերակառուցումը նախաձեռնողի՝ Սմբատ Մաթևոսյանի եղբայրը, թվագրման հետ կապված այլ դար նշեց՝ 4-րդ դար, քան գրված էր վանքի մուտքի ցուցանակին: Այս պահին...

Իսկ ավելի ուշ, արխիվային նյութերում հանդիպեցինք այլ տեղեկությունների.





(Դորբանտավանք, Թալին, Նալբանդ, Ջրառատ) նման այստեղ ևս ան-
կյունային չորս մեծ տրոմպները հիմքը չեն բաժանում ութ հավասար մա-
սերի, որի հետևանքով թմբուկի հիմքերն անհավասար են, իսկ գմբեթը
հիմքում ոչ թե շրջանաձև է, այլ ձվաձիր՝ հյուսիս-հարավ առանցքի նկատ-
մամբ: Հուշարձանի փոխանցման գոտու առանձնահատկությունն այն է,
որ փոքր տրոմպները զետեղված են մեծ տրոմպներից ընդամենը մեկ շարք
վերև, որով խիստ կրճատվել է թմբուկի բարձրությունը: Թուխ Մանուկի
թմբուկը, այսպիսով, գմբեթավոր փոքր հուշարձանների մեջ ամենացած-
րարիրն է (0, 97 մ):

Եկեղեցու դեկորատիվ զարդերից պահպանվել են քիվերը: Վերնա-
մասում դրանք խոշոր օղակներ են (այդպիսի զարդանախշ ունի նաև
Ջովունիի Պողոս-Պետրոս հուշարձանը), ներքևում՝ ավելի փոքր գնդօ-
ղակներ: Պահպանված մի քանի քարերի վրա երևում են ալիքաձև զար-
դեր:

Թ. Թորամանյանը եկեղեցու քիվերի զարդանախշերի ձևերից ելնելով,
այն համարում է VII դարի գործ: Հայկական ճարտարապետության մեծ
գիտակ Ն. Տոկարսկին կարծում է, որ այդ հետաքրքիր հուշարձանը կա-
ռուցված է 637—660 թթ. ընթացքում: Վ. Գրիգորյանը, ուսումնասիրելով
Հայաստանի նույնատիպ հուշարձանները, եկել է այն համոզման, որ Թուխ
Մանուկը կառուցվել է VII դարի սկզբին:

Մխեի վանք: Լուսագյուղի արևելյան կողմում, մոտ կես **կմ** հեռավո-
ությամբ, անտառափեշին մնում է մեկ ուրիշ կառույցի ավերակ: Գյու-
ղացիներն այդ ավերակը կոչում են Մխեի վանք: Կանգուն է արևելյան
կողմի պատ-կամրջակը: 1983 թ. այստեղ հնագիտության և ազգագրության
ինստիտուտի կողմից կատարված մասնակի պեղումների շնորհիվ բացվել
են նաև պատ-կամրջակի երկու կողմերում գտնված խորանատիպ շինու-
թյունների հիմքերը: Կառույցը արտաքինից ուղղանկյուն շինություն է:
Ներսում, բացի արևելյան կողմում գտնվող պատ-կամրջակից և նրան կից
շինություններից, ուրիշ մանրամասներ չեն բացվել: Պատ-կամրջակի և
կից կառույցների եզրաքարերն ու ներքին շարքերի քարերը սրբատաշ
տուֆից են, մյուս մասերում, հատկապես արտաքինից, օգտագործվել է
անմշակ հրաբխաքար: Մուտքը գտնվել է արևմտյան կողմում, որտեղ պա-
տը մոտ 2 մետր բարձրությամբ նույնպես բացվել է: Պատ-կամրջակի ներ-
սի պատերը ծեփված են եղել: Պեղումների ժամանակ բացված հատվածնե-
ներում կան հնագույն շրջանի (IV—VI դարեր) կնիքը կրող զարդանախ-
շերով քարեր:

Մխեի վանքի կառուցման ժամանակը և պատկանելությունը առայժ
դժվար է որոշել:

Ավեր բերդ: Գյուղից 2 **կմ** հյուսիս, Զախի ձոր կոչվող տարածությա
վերջնամասում, ծովի մակերևույթից մոտ 2700 մետր բարձրության վրա

Դեհ, գոնե ընտանեկան լուսանկարները մեզ հստակ հուշում էին վերակառուցման թվականների մասին:



Լսելով և վերլուծելով մեր զրուցակիցների պատմածները՝ խմբի անդամներով մտորում էինք՝ ինչ կամքի տեր ժողովուրդ են եղել, որ երբ որոշ եկեղեցիների խորաններ քանդել էին, երբ եկեղեցիները վերածվել էին պահեստների և գտնվում էին հսկողության տակ, երբ արգելված է եղել եկեղեցի գնալ, եկեղեցական արարողություններ անել, նախաձեռնել և իրականացրել են վանքի վերականգնման աշխատանքներ:



Եվ պարզվեց.
https://drive.google.com/file/d/12w2Nly1Bz8YQxgT6TX6UFEJvLmyObB3r/view?usp=drivesdk[1]
Հուշարձանների պահպանության կոմիտեն, որը խորհրդային կառույց է եղել, իր հսկողության տակ է վերցրել եկեղեցիները և վանքերը՝ որպես հուշարձաններ: Իշխանությունների կողմից արգելված է եղել ծիսական և կրոնական արարողությունների կատարումը: Բայց ժողովուրդը, այնուամենայնիվ, ելք գտել է ...
https://drive.google.com/file/d/13yS2hF1rpMQg_wsaleESH8WfxmyX1wRc/view?usp=drivesdk
Հավատքը գալիս է մարդու հոգուց, և այնքան էլ հեշտ չէ արտաքին սպառնալիքով արգելել դրա գոյությունը: Գյուղացիները, թեկուզ գաղտնի, միևնույն է մկրտություն, մատաղ և այլ արարողություններ արել են: Ինչպես պատմում էր Խանամիր Հովհաննիսյանը, երբ իր հայրը՝ Մեսրոպը, լինելով կուսակցական կոմիտեի քարտուղարը, գիշերով մկրտել էր իր որդիներին, Ռայկոմի քարտուղարի բարեխոսությամբ հազիվ էր խուսափել պատժից:

-Իսկ անվան հետ կապված ի՞նչ կարող եք մեզ ասել:
Հնչում է նոր հարցը, և այդ հարցին պատասխանելու է գալիս մեր հաջորդ զրուցակիցը՝ Ապարանի Սբ. Խաչ եկեղեցու հոգևոր հովիվ Տեր Մուշեղ քահանան:
https://drive.google.com/file/d/12x6m2eft2KpMVBuoFdsz56fCpNRZzOV1/view?usp=drivesdk
Իգիթ Մաթևոսյանը պատմում էր, որ ժողովուրդը սարի վերևում գտնվելու համար վանքը նաև կոչել է «Վերի վանք»:

[1] Այս աշխատանքում տեղ գտած հղումները (հատվածներ հարցազրույցներից) այլևս անհասանելի են:

- Ո՞ր դպրոցից եք, երեխե՛ք ջան, -հարցնում է Տեր Հայրը:
- Լուսագյուղից ենք, Տե՛ր Հայր:
- Լուսագյուղի միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանի աշակերտներն են, Տե՛ր Հայր, և մեզ է միացել 10-րդ դասարանի միակ աշակերտը՝ Ալվարդը, - ավելացնում է մեր դաստեկը՝ ընկեր Հովհաննիսյանը:

Այս անգամվա մեր այցը վանք տարբերվեց նախորդ տասնյակ այցերից,քանի որ փորձում էինք խմբով շրջակայքի փոփոխությունը արձանագրել:

«Երեխե՛ք ջան, տեսեք՝ մեր օրերում վանքի շուրջ ինչքան խաչքարեր են տեղադրում: Մարդիկ ինչ-որ խնդրանքով ուխտ են անում Վերի վանք և հետո խաչքար են բերում տեղադրում: Էն ժամանակ (խորհրդային շրջանը նկատի ունի) վախենում էին եկեղեցի գնալ, ուր մնաց խաչքար տեղադրեին», - պատմում է Խաչիկ պապը:

Զրուցակիցներից շատերն էին պատմում, որ եկեղեցի հաճախում էին գաղտնի և չէին հասցնում մտածել հագուստի մասին:
Մեր օրերում, թեև հագուստի հատուկ տեսակ չկա, որ հագնեն եկեղեցի գնալիս, բայց հագնում են իրենց ունեցածից ամենալավը:
Դե՛, քաղաքի հյուրերը միշտ էլ տարբերվել են...

Թեև մեր զրուցակիցները նշեցին, որ խորհրդային տարիներին արգելված է եղել, բայց գյուղացիները ուխտի օրը փոքր խմբերով այցելել են վանք, տոնել այդ օրը:
Մեր օրերում ամեն տարի ուխտի օրը մեծ շուքով նշվում է:
Այնպես որ…հրավիրված եք…
Համբարձման հաջորդ կիրակի...

Հրանտ Մաթևոսյան. Բանի աշխարհը

Անհատական աշխատանք

Մարզ	Երևան
Դպրոց	Հակոբ Կոջոյան կրթահամալիր
Ուսուցիչ	Լուսինե Դիլսզյան
Աշակերտ	Պետրոսյան Մայա

Հրանտ Մաթևոսյան. Բանի աշխարհը

(Պայմանական հարցեր Հրանտ Մաթևոսյանի «Բանի աշխարհը» գրախոսականից)

Հարց - Ինչպե՞ս եք գնահատում հին էպոխայի վերափոխումը նորով:

Պատասխան - Էպոխա հեռացավ: Ժամանակաշրջան, մեծ մի ժամանակաշրջան հեռացավ, և էպոխա է գալիս: Եկել է: Եվ եթե ոչ ամբողջ աշխարհի համար, մեզ համար՝ Սովետական Միության տարածքի ժողովուրդների համար, շատ ցավագին ընթացք է սա: Ցավագին, դժվար տանելի ընթացք է սա: Մենք մեր ժամանակից դուրս էինք նետվել և ժամանակից դուրս էինք մնացել: Արևմուտքը անընդհատ նույն ընթացքի մեջ էր, և Արևմուտքի համար անսպասելի չի այս նոր էպոխան՝ ի՛ր ժամանակը: Մեզ համար անակնկալ էր, անսպասելի էր: Եվ դրա համար է ցավալի …

… Արևմուտքը, ներառյալ նաև Արևելյան Եվրոպայի ժողովուրդները, այսպես կոչված ճնշված, սովետական լծի տակ ճնշված ժողովուրդները՝ լեհերը, չեխերը, անգամ հարավսլավացիները, հրճվանքով էին նահանջը՝ իրենց առաջընթացը և Սովետական Միության նահանջը արձանագրում: Այդ ժամանակ նաև մեզանից շատերը, թերևս անգամ ես, հրճվանքով միանում էին նրանց գրոհին՝ ընդդեմ բռնակալության, ընդդեմ այս երկրի: Եվ տագնապը ամենից շատ արտահայտվում էր նրա՛նց դեմքին, նրա՛նց մեջ, ովքեր որ դիսիդենտներ էին, երբ թվում էր, թե իրենց հաղթանակն էր՝ իրենց պայքարը պսակվել է հաղթանակով: Այդ տագնապը շատ ավելի Իոսիֆ Բրոդսկու մեջ էր և Սերգեյ Դովլաթովի: Գիտեին, թե ինչ զարհուրանք է ճայթելու մեր գլխին և ինչ հասարակություն, ոչ թե հասարակարգ, այլ հասարակություն ենք կորցնելու, ինչ վիթխարի կորուստներ ենք ունենալու, ինչ շատ զոհեր են լինելու: Նրանք էդ ավելի էին տեսնում, քան մենք: Նրանք գիտեին, թե էս ինչ է: Հնարավո՞ր է, որ ավելի փափուկ անցում լիներ: Չեմ կարծում, թե հնարավոր էր: Էդ փափուկ անցումը լիներ, և էս վիթխարի կորուստները չլինեին: Չեղավ, այդ փափուկ անցումը չեղավ: Նշանակում է՝ չէր էլ լինելու: Կորուստները, էն կորուստները, որ ասում եմ, իսկապես դրանք կշռելի, ծանր կորուստներ են:

Ուրիշ անգամ արտահայտվել եմ և բավականին ճշգրիտ բանաձև եմ գտել. հայ մարդու համար, իմ հայ մարդու համար, ինձ համար մեծագույն կորուստը իմ իմպերիական կարգավիճակի, ստատուսի կորուստն է:

Հարց - Ի՞նչ կորցրինք Սովետական Միության փլուզումով:
Պատասխան - Որպեսզի սա հասկանալի լինի, թե ինչ կորուստ է, ինչ է նշանակում. Միության փլուզումից, Ռուսաստանի հեռանալուց հետո այլևս իմ ապլոմբները ես պետք է կորցնեի, այլևս էն բարձր աշխարհով չէի, բարձր ձայնով չէի աշխարհում կանգնելու, բարձր կեցվածքով և դու-ով չէի խոսելու զորեղ պետությունների զորեղ քաղաքացիների հետ, նրանց պրեզիդենտների մասին, նրանց մշակույթի մասին, այլ նստելու էի, ճիշտ իմ փոքր չափերին էի գալու:
Դա վիթխարի կորուստ եմ համարում:
… Երկիրը, իհարկե, պարտվեց: Երկրները առհասարակ պարտվում են իդեոլոգիաների պարտությունից հետո, մշակույթների պարտությունից հետո, երկրները, պետությունները զոր ու զորքով գրոհում են, իհարկե, մշակույթների նախնական գրոհումներից հետո: Եվ մի մշակույթը տեղի է տալիս մի այլ մշակույթի, որից հետո հաջորդում է գրոհող երկրի զորքերի ներխուժումը:
Մշակութային պարտություն կար էս երկրի մեջ: Արևմուտքի մշակույթի առջև պարտություն: Էդ պռատ Բանի, մշակույթի պարտությունն էր ազատ խոսքի, ազատ արվեստի առջև: Եվ, իհարկե, պետք է դրան հաջորդեր նաև երկրի տնտեսության, բանակի, զինական ուժի, մի խոսքով՝ երկրի պարտությունը: Ահա:
Հարց - Սպառված մշակույթի երկիրը նոր հազարամյակ ի՞նչ է տանում, թե՞ դատարկ է գալիս:
Պատասխան - Տանո՛ւմ է, այնուհանդերձ: Աշխարհին, մարդկությանը, եկող սերունդներին մի բան տանում է: Մի բան կարողացել է քարագրել. դարի մեծագույն մտածողներից մեկին՝ Չարենց է տանում, տանում է Մարտիրոս Սարյան, Արամ Խաչատրյան: Դուք կասեք հիմա, թե նրանք այնուամենայնիվ 19-րդ դարի ընդերքից են բարձրացել, անցյալի մեծ, թումանյանական շրջանի մեծ մշակույթի ներկայիսն շարունակությունն էին, և 19-րդ դարի մշակույթը արձանագրվեց էդ խոշոր երևույթների գոյությամբ մեր իրականության մեջ: Դրա մեջ որոշ ճշմարտություն կա, բայց նաև ճշմարտության մյուս երեսն էլ այն է, որ՝ այնուամենայնիվ, էս հողի, էս մթնոլորտի զավակները եղան և իրենց օժտեցին իրենցով: Մեր գերբը հարստացրին իրենցով: Հանրապետությունը, մեր ազգը, Սովետական երկիրը՝ առանց կուլտուրայի, իրենցով օժտեցին: Դարձան էդ երկրի և՛ փառքը, և՛ վկայականը ապագայում՝ էս երկրների և իրենց ժամանակի:
Հարց - Ըստ ձեզ՝ ի՞նչ է լինելու:
Պատասխան - Ծանր: Մշակույթն է առհասարակ, ամբողջ աշխարհում, մշակույթն է կանգնած ծանր վիճակում: Արևմուտքի վերաբերմամբ. ես նրանց փորձի վրա կարող եմ էն հասկանալ, և փորձել ձեզ էլ հասկացնել, որ էնտեղ նկարչությունը, մշակույթը առհասարակ մտել է կենցաղ, դարձել է ժողովրդային, համաժողովրդային կյանքի մի մաս: Զորօրինակ, ասենք, ծաղկանկարչությունը դարձել է քաղաքաշինության մաս, փողոցները ուղղակի, հենց էդպես կենդանի ծաղիկներով զարդարում են, երկիրը դառնում է ծաղկաստան. այլևս հազիվ թե ծաղիկը դարձյալ վերադառնա շրջանակի մեջ, պատերից կախվի:

Էդպես նաև երաժշտությունն է, կարծեք. իր դասական ֆորմերից զրկվել, դարձել է մարդկային կեցության ատրիբուտներից, իրերից մեկը։ Հարկ չկա, կարծես թե, անպայման սրահները գնալ, եկեղեցի գնալ, որ իրենց Բեթհովենին, որ իրենց Բախին լսեն։ Եվ ահա, դարձյալ, դարձել է մարդկային օրվա մի մասնիկը։ Էդպես նաև գիրքը, փաստորեն։ Գրքից նրանք խլել են էդ գրքի սքանչելի հնարավորությունները, չնայած ներգործուն զորությամբ գիրքը այլ բան է, այլ մեծ, մեծ մի բան է, մյուսներից մեծ։ Բայց նրանք իրենց գիրքը, իրենց գրքի էդ զորությունը խլել են։ Նաև գրքի հետ հավասար հայտնվել են խաղից դուրս վիճակում։ Ի՜նչ վիթխարի ճիգով, միջոցների, միլիոնների ու միլիարդների ներդրումով են ուզում, ջանում նկատելի մի բան դարձնել իրենց գործը։
Ինչ կլինի ապագայո՞ւմ… Մեր թևերը չեն կարողանում ընդգրկել կյանքը իր ամբողջությամբ, իր խորությամբ, իր ընթացքի արագությամբ, իր հեղափոխականության պահը։
Դա իհարկե, անպայման, կպատժի մեզ և կկործանի էն բոլոր խեղճուկրակ փորձերը, որոնք մշակույթ են ձևանում, բայց մշակույթ չեն։ Եվ էս դեպքում, իհարկե, նոր շեքսպիրներ անպայման կլինեն, բայց համընդհանուր հոսքը արտագրելը կլինի իրականությունը՝ այնպես ինչպես կա։ Որովհետև էն ծավալված իրականությունը արդեն նախորդ մեծ մշակույթների ծավալված իրականությունն է։
Հարց -Ի՞նչ է պետք անել;
Պատասխան - Նոր, է՛ս իրականությունը կդառնա համաժողովրդական գիտակցություն և կեցություն։ Եվ ահա էս նոր մակարդակի վրա կբարձրանա էս նոր Շեքսպիրը, նոր մարգարեները, ովքեր որ կծավալեն գալիքը, իրենց գալիքը։
Իսկ առայժմ, քանի դեռ էդ շեքսպիրները չկան, էդ մեծերը չկան՝ վավերագրություն է։ Գոնե քաջությունը ունենանք, գոնե խիզախությունը ունենանք իրականությունը տեսնել էնպես, ինչպես կա և, եթե մարգարեները չենք՝ գալիք ժամանակների, ապա գոնե մեր ժամանակների մատենագիրները լինենք։ Մեր ժամանակների վավերագրողները լինելու քաջությունը ունենանք։

Ռուսիյա կինոթատրոնի գաղտնիքները	
Խմբային աշխատանք, պաստառ	
Մարզ *Դպրոց* *Ուսուցիչ* *Աշակերտներ*	Երևան Թիվ 40 հիմնական դպրոց Մերի Մանուկյան Բեգլարյան Դավիթ, Թորոսյան Էլլա







«Ռոսիյա» կինոթատրոնի տեղը նախկինում եղել է Երեւանի ամենահին շուկաներից մեկը՝ բավականին կեղտոտ տարածքով, սակայն ինքնատիպ կոլորիտով: Որոշում կայացվեց, որ շուկայի փոխարեն կինոթատրոն կառուցվի: 1970-ական թվականներին նախագիծ ներկայացրեցին ճարտարապետներին միության դատին: Այն մեծամասնության կողմից հավանություն էր արժանացել: Սկզբում ուզում էին անվանել «Այրարատ» կամ «Նոյան տապան», սակայն նրանց ձայնը որոշիչ չէր, և կինոթատրոնը անվանեցին «Ռոսիյա»: Կինոթատրոնի բացումը կայացավ 1974 թվականի դեկտեմբերին՝ ՀԿԿ կենտկոմի պլենումի նիստով, որը վարեց Կարեն Դեմիրճյանը:



Այդ տարիներին նոր ֆիլմերը ցուցադրվում էին կինոթատրոնում: Դահլիճը լեփ-լեցուն էր լինում, տոմս գնել հնարավոր չէր: 1978 թվականին կինոթատրոնում տեղի ունեցավ համամիութենական փառատոն: 1980-ական թվականներին ցուցադրվել է «Վերադարձ դեպի Արարատ» ֆիլմը: Ֆիլմում առաջին անգամ ցուցադրվում էր մեր համար անսովոր՝ Արարատը Թուրքիայի կողմից: Ժամանակին, ֆիլմ դիտելը մշակույթ էր, և այդ կինոթատրոնը ժամանցի իսկական վայր էր: Մարդիկ մի քանի ժամ շուտ էին գալիս հաճելի ժամանակ անցկացնելու համար: Ի վերջո, «Ռոսիյա» կինոթատրոնը դարձավ Ռոսիյա մոլ:



1974թ.-ին «Ռոսիա» կինոթատրոնի հեղինակներից մեկը՝ Հրաչ Պողոսյանը, դիմեց ինձ և պատվիրեց շենքի համար մի քանի դեկորատիվ կոմպոզիցիաներ պատրաստել: Նա խնդրեց, որպեսզի նախասրահի և բարի միջև մի այնպիսի միջնապատ պատրաստեմ, որը թափանցիկ կլիներ, և որի վրա կցուցադրվեին ֆիլմերի գովազդները: Միջնապատի վրա գրվեցին դեկորատիվ քանդակներ: 1979թ.-ին Հրաչ Պողոսյանը, Արթուր Թարխանյանը, Սպարտակ Խաչիկյանը կինոթատրոնի նախագծի համար արժանացան ԽՍՀՄ նախարարների խորհրդի մրցանակին:

Սղագրության արդյունք No1

- Ի՞նչ եք հիշում հին Ռոսիյայի մասին:

- Երկու դահլիճ՝ մեծ և փոքր, բացման օրը և թիվը չեմ կարող ասել՝ չեմ հիշում, բայց մեծ դահլիճում նայել եմ ֆիլմ, ը-ը, և դահլիճը նախ վապեռվիխ ընտիր դահլիճ էր, մեծ, լավ, փոքրում չեմ եղել՝ չեմ կարող ասել, բայց շատ գեղեցիկ, ը-ը, ընտիր դահլիճ էր, ու ֆիլմեր միշտ էդտեղ գնում էին, էդտեղ փոքր, և՛ էդտեղ, և՛ դահլիճում, և այլն և այլն, մարդիկ մեծ հաճույքով գնում էին էդտեղ, թեպետ էն ժամանակ (դադար), էդ տեղը առանձնապես բան չէր, ը-ը, որտեղ էդ շենքը դեռ չկար, ցածր ինչ որ շենքեր էին էդտեղ, տներ էին փոքր, բայց, մարդիկ գնում էին մեծ հաճույքով:

- Ի՞նչ ֆիլմ եք էնտեղ դիտել.

- (դադար) Ես նայել եմ Ռոմեո Ջուլիետան, (դադար), էդ Ամերիկայի ֆիլմ, էդ որ նոր դուրս էր եկել (վերհիշում է) սլուշաի դա երեկ 72 թիվն էր, (դադար) հա՛, 1972 թվին, խելքս որտեղով, ուրեմն նայել եմ Ռոմեո Ջուլիետան, է-է, երաժշտությունը ընտիր, (դադար), նայել է՞ք էդ ֆիլմը:

- Հեռուստացույցով, ոչ էկրանի վրա:

- Ըհն, ընտիր էր երաժշտությունը, և Ջուլիետի դերասանուհուն հիշում եմ՝ Օլիվիե Խասսի, ոտ, ու վապշե, ու շատ գեղեցիկ էին, ինքն էլ, էդ Ռոմեո խաղացողն էլ ճիշտն ասած չգիտեմ, կռասավցի, երկուսն էլ շատ գեղեցիկ (դադար), ֆիլմը ընտիր էր, դե ֆիլմի սյուժետը բոլորս

գիտեինք, իհարկե՛, բայց շատ սենց նայվում էր, նույնիսկ լայն 2-3 կադրեր, որ ասեցինք ես ոնց որ թողել են, նու՛ նենց, իհարկե ոչ շատ ընենց բանով, բայց կար։

- Իսկ հարակից ինչ կար, ասենք սրճարան, ինչ որ ուտելու տեղ։

- Սրճարան կար, կարելի էր գնալ սուրճ խմել, ինչ որ բուտերբրոտներ բաներ ուտել։

- Համով բանե՞ր էին։

- Որ ասեմ չեմ հիշում, երևի՛, բայց դա կար, հետո ամենահետաքրքիրն այն էր, որ մարդիկ գնում էին էնտեղ ո՛չ թե ֆիլմ նայելու, այլ տեսնելու էտ շենքը, որտեղ մեծ շենք էր դա, իրոք մեծ շենք էր էլի, առաջինը երևի համալիրից հետո, առաջին մեծ շենքն էր, գնում էին նայելու, և ամենահետաքրքիրը գիտե՞ս որն էր, որ էն բանից հագնվա՛ծ, բանով էլի գնում էինք կակ նա պռազդնիկ էլի, սենց գնում էին, սենց հետաքրքիր շատ։

-Իսկ ինչո՞ւ ա կոչվել Ռոսիյա։

- Հիմա ասեմ, (դադար) հայ-ռուսական, Հայաստանի և Ռուսաստանի միանալու, այսինքն էտ, ոչ թե միանալու, ը-ը, նու վոպշեմ դռուժբա։

- Բարեկամություն

- 150 ամյակը, հետո դուրս եկավ նաև ֆիլմ «Մխիթար Սպարապետը», էդ Սերո Խանզադյանի բանը, վեպի հիման վրա, և, ը-ը, հենց էդպես էլ կոչվեց։

-Այսինքն 150 ամյակի առթիվ ա կառուցվել։

-Ըհը

Սղագրության արդյունք No2

- Բարև ձեզ։

- Բարև ձեզ։

- Ի՞նչ կպատմեք կինո Ռոսիայի մասին։

- Կինո Ռոսիան Երևանի գեղեցիկ շենքերից մեկն է, կառուցվել է 60-ական թվականներին, նախկին «կոլխոզ» շուկայի տերիտորիայում (դադար), Ռոսիա կինոթատրոնի շենքը պետք է կոչվեր «Այրարատ», բայց ինչ-ինչ պատճառներով կոչվեց «Ռոսիա»։

- Իսկ ինչո՞ւ կոչվեց։

- Կոչվեց «Ռոսիա», որովհետև Մոսկվան է կառավարում, ռուսական կառավարությունն էր ղեկավարում, կենտրոնը ղեկավարում էր Ռուսաստանը, ավելի ճիշտ, Ռուսաստանն էր ղեկավարում կինոների անվանակոչման, շենքի անուն դնելու հարցերը, դրա համար «Այրարատ» չդրեցին և դրեցին «Ռոսիա»։

- Իսկ ի՞նչ կինոներ եք դիտել այնտեղ։

- Շատ կինոներ (դադար), կինոներ եմ դիտել, շատ կինոների եմ ներկա եղել, կառուցվել են բազմաթիվ հայկական, օտարերկրյա և շատ երկրների լավ ֆիլմեր։ Հատկապես Հնդկական ֆիլմերն են շատ ցուցադրում, էնդեղ շատ ներկայացնում, բոլորս գնում էինք այնտեղ, սիրով գնում էինք էդ տեսնելու։ Կինո Ռոսիայի շենքը ուներ երեք դահլիճ՝ մեծ դահլիճ (դադար), 3 դահլիճ՝ կարմիր դահլիճ, կանաչ-կարմիր և մանկական դահլիճը, կար շատ լավ թեյարան, կային խաղային ատրակցիոն-հրապա-խաղային, խաղեր, սրճարան, դրամարկղը շենքի կողքն էր, հիմա մանկական դահլիճի փոխարեն կառուցվել է Ռոսիա-Մոլ առևտրի կենտրոնը, կինոթատրոնի մյուս դահլիճը ու մյուս օժանդակ տարածքները օգտագործվում են որպես տոնավաճառ։

- Իսկ ինչ կինոներ էին մոդա այդ ժամանակ։

- Մոդա էին շատ կինոներ, հատկապես Հնդկական կինոներ էին մեկը մյուսի հետևից ներկայացնում՝ Դիսկո Պարողը, Սիրելի Ռաջան, Պարոն 420 -ը։

- Իսկ ի՞նչ փոփոխություններ են տեղի ունեցել էդտեղ։

- Կինո Ռոսիայում ես ներկա եմ եղել «Երջանկության մեխանիկայի» պրեմիերային, և շատ հետաքրքիր էր, բոլոր դերասանները ներկա էին, բոլոր դերասանները խոսեցին, արտահայտվեցին, հանդիսատեսներից ոմանք արտահայտվեցին, շատ հետաքրքիր անցավ։

- Իսկ ի՞նչ փոփոխություններ են տեղի ունեցել կինո Ռոսիայում։

- Կինո Ռոսիան հիմա դարձել ա առևտրի սրահներ, բարեր, մոլ, առևտրի մոլեր, կան մանկական սրահներ, թեյարաններ, սրճարաններ, հիմա լրիվ ուրիշ պրոֆիլի շենք է դարձել։

- Շնորհակալություն հարցազրույցի համար։

Խորհրդային և հետխորհրդային դպրոցը Տավուշի մարզի Նորաշեն համայնքում	
Խմբային աշխատանք, պաստառ	
Մարզ	Տավուշ
Համայնք	Նորաշեն
Դպրոց	Փաշո Կարապետի անվան միջնակարգ դպրոց
Ուսուցիչ	Նելլի Ավագյան
Խմբի անվանում	«Պահպանողականներ»
Աշակերտներ	Աթոյան Լենա, Թարխանյան Արմեն, Ավագյան Վազգեն, Ավագյան Մերի, Խաչատրյան Վահե



1. Ստալինի արձան

Տավուշի մարզի Նորաշեն համայնքում մինչև օրս պահպանվում է Ի. Ստալինի արձանը: Այն գտնվում է գյուղի պահեստում: ԽՍՀՄ փլուզումից հետո արձանը գյուղի կենտրոնական մասից տեղափոխվել է գյուղի պահեստի մոտ: Մի խումբ մոլեռանդ երիտասարդների կողմից կոտրվել է՝ իրանից առանձնացվել է գլուխը: Տեղի իշխանությունները ոչ մի լուրջ քայլ չեն կատարել վերականգնելու համար:

2. Նորաշենի տարրական դպրոցը կառուցվել է 1921թ-ին: Միջնակարգ դպրոցը կառուցվել է 1961թ-ին և աշխատել է 1962թ-ից: Փաշո Կարապետի Ավագյանը Թիֆլիսում մանկավարժական կրթություն ստանալուց հետո 1924թ-1935թթ աշխատել է շրջանի տարբեր դպրոցներում: 7 տարի Նորաշենիդպրոցում աշխաել է որպես ուսուցիչ, ուսմասվար և տնօրեն: Այժմ Նորաշենի միջնակարգ դպրոցը կոչվում է Փաշո Կարապետի Ավագյանի անունով:

3. Փաշո Ավագյանը ծնվել է 1906թ-ին Տավուշի մարզի Նորաշեն գյուղում: Նախնական կրթությունը ստացել է իր ծննդավայրում՝ Նորաշեն գյուղի տարրական դպրոցում, իսկ 1920թ-ին ընդունվել է Թիֆլիսի համար 86 մանկավարժական թեքումով աշխատանքային միջնակարգ դպրոցը, որն ավարտել է 1924թ-ին: Եվ ահա նույն թվականին էլ աշխատել է Նորաշենի, իսկ 1 տարի անց՝ Մովսեսի դպրոցներում որպես մայրենի լեզվի և գրականության ուսուցիչ: Այնուհետև տեղափոխվել է 1981-1982 ուստարվա ընթացքում Թիֆլիս, աշխատել Պրոլետար թերթի խմբագրությունում՝ որպես գյուղվարիչի տեղակալ:

Հայկական ԽՍՀ լուսավորության մինիստրության հրամանով Փ. Կ. Ավագյանը 1935թ-ից աշխատել է Ալավերդու շրջանի Ուզունլար գյուղում, ապա Ալավերդի քաղաքի միջնակարգ դպրոցում որպես ուսմասվար: 1940թ-ին նշանակվել է Ալավերդու գործկոմի ժողկրթբաժնի վարիչ: «Խորհրդային Հայաստան», «Պրոլետար», «Պղնձի ֆրոնտում» և այլ թերթերում լույս են տեսել նրա հոդվածները:

3. ԽՍՀՄ փլուզումից հետո դպրոցում պահպանվեց նաև **դպրոցական համազգեստը**: Համազգեստի պահպանման գործում մեծ դեր ունեցավ տնօրեն Զինաիդա Թարխանյանը: Համազգեստի պահպանման նպատակը հիմնականում հավասար պայմաններ ստեղծելն էր երեխաների համար և, իհարկե, թեթևացնում էր ծնողների սոցիալական վիճակը: Երեխաները փոխանցում էին համազգեստը մեկը մյուսին ավարտելուց հետո: Դժվարությունն այն է եղել, որ տարեցտարի հագուստը մաշվել է և հնարավորություն չի եղել այն երկար պահպանելու:

4. 2011-թից արդեն փոխվեց դպրոցի համազգեստը, բայց ոչ ազատ հագուստ: Մենք մինչև հիմա կրում ենք սև շրջազգեստ և սպիտակ վերնաշապիկ, և տարածաշրջանի միակ դպրոցն ենք, որ կրում ենք միազգեստ դպրոցական համազգեստ: Մենք՝ աշակերտներս սիրով ենք կրում մեր դպրոցական համազգեստը:

Պաստառի սև ու սպիտակ լինելը պայմանավորված է ժամանակաշրջանի դիպուկ ներկայացմամբ:

Անտառում թաքնված գեղեցկուհին	
Անհատական աշխատանք, շարադրություն	
Մարզ *Համայնք* *Դպրոց* *Ուսուցիչ* *Աշակերտ*	Տավուշ Գանձաքար Հ. Մեհրաբյանի անվան միջնակարգ դպրոց Արմինե Դովլաթբեկյան Ներկարարյան Նանե

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մարդու բնորոշումներից մեկն էլ այն է, որ մարդը մշակութային էակ է: Սա նշանակում է, որ մարդը մշակույթ ստեղծող էակ է, մյուս կողմից էլ մարդը մշակույթի արդյունքում ստեղծված էակ է: Մարդը ձևավորվում, դառնում է այնպիսին, ինչպիսին իրեն շրջապատող աշխարհն է, ձեռք է բերում մշակութային այն մտածելակերպը, որը բնորոշ է իրեն ծնունդ տվող մշակույթին: Իսկ ինչպե՞ս կարող ես դառնալ այդ մշակույթի կրողը, եթե չես հաղորդակցվում նրան, եթե չգիտես, չես ճանաչում քեզ, շրջապատող մշակութային աշխարհը: Եվ չճանաչելով քեզ ծնունդ տվող մշակույթը՝ չես ճանաչում ինքդ քեզ. «Ծանիր զքեզ»: Ինքնաճանաչ անհատը ավելին է, քան մարդը:

Չափազանց կարևոր է ճանաչել հայրենիքդ, հայրենի բնօրրանը: Հայրենաճանաչողությունից է սկիզբ առնում սերը, հոգատարությունը, պատասխանատվությունը հայրենիքիդ նկատմամբ: Այս աշխատանքը հնարավորություն է մատաղ սերնդի ներկայացուցիչներին մոտեցնել մեր մշակութային արժեքներին, ձևավորել այդ մշակույթը կրող մարդ, հայրենասեր, ինքնաճանաչ անհատ:

«Գարնանային դպրոց» մրցույթ - փառատոնն[2] ըստ երևույթին բազմաշերտ, բազմաբովանդակ, կարևոր, արժեքավոր գաղափարներ ու նպատակներ ունեցող նախագիծ է, և որպես այդ աշխատանքի մասնակիցներ՝ ուսումնասիրության և հետազոտական աշխատանքների ընթացքում բարելավել ենք իմացական ոլորտը՝ հարստացնելով բազմազան գիտելիքներով, ձևավորել անձնային կարևոր որակներ՝ կամք, նպատակասլացություն, համառություն, վճռականություն, ստեղծագործական միտք, երևակայություն, սոցիալական հմտություններ՝ հաղորդակցվել, համագործակցել, կարողություններ՝ վերլուծել, համադրել, համեմատել, գրավոր և բանավոր խոսք կառուցել, չափագրել, հարցազրույց վարել, բարեվարքություն դրսևորել, կատարել աշխատանք սկզբնաղբյուրի հետ ...

Կազմակերպել ենք հրաշալի ժամանց ու հանգիստ բնության գրկում՝ արշավներ, այցելություններ, շրջակա միջավայրի նկատմամբ հոգատար վերաբերմունք է ձևավորվել: «Եղցին» դարձել է «Մերը»:

Եվ, ի վերջո, ի սկզբանե, երբ միտք հղացավ այս աշխատանքին մասնակցելու, առաջին առանցքային նպատակը մեր նյութական հարուստ, մշակույթ ունեցող հրաշք գյուղի պատմամշակութային հուշարձանների մասին համապարփակ և համակարգված տեղեկություն իմանալ, հավաքելն էր: Չկա մի անկյուն, որ մեր դարավոր պատմության լուռ վկաները չփաստեն, որ հայոց աշխարհը քաղաքակրթության օրրանն է, իսկ մեր հայրենի Գանձաքարը այդ քաղաքակրթության մի մասն է: Իսկ ինչուները շատ են և գուցե շա՛տ են այն

[2] Հեղինակը նկատի ունի «Պատմության մրցույթներ 3,0» ծրագիրը:

պատճառով, որ ժամանակին այնքան էլ «լավ» չենք վերաբերվել այդ արժեքներին: Եվ հիմա, առավել քան երբևէ, մենք պարտավոր ենք տերը լինել ամեն մի քարի, ամեն մի սրբագործված պատառի:
Պետք է մոռացության փոշին մաքրել, պետք է խոսեցնել…
Յուրաքանչյուրս հայրենիքի մեր անկյունում ունեցած մշակութային արժեքները վեր հանելով, վերաարժևորելով, մյուսների համար ճանաչելի դարձնելով՝ կլինենք մշակութային արժեքներին նոր կյանք տվողն ու ապրեցնողը, կլինենք մշակույթի կրողը:
Իսկ որքա՞ն կարևոր է, որ նախագծի շրջանակում դպրոցականներն են, ովքեր դառնում են մասնակիցը այդքան կարևոր աշխատանքի, ովքեր կարևորել են այդ աշխատանքը, մոտեցել են մշակույթին, արժևորել են այն և որպես այդ մշակույթը կրողներ՝ կարևորել և արժևորել ենք ինքներս մեզ:
Մեր նպատակն է պատմել մեր գյուղի, մեր պատմամշակութային հուշարձանների, մեր բնության նմանը չունեցող գեղեցկությունների, մեր գյուղի հրաշալի մարդկանց մասին, պատմել բոլորին, հրավիրել բոլորի ուշադրությունը: Ասել, որ այստեղ է բաբախում «մոլորակի սիրտը»:
Եվ գուցե նաև ամրոցներով, բերդերով, մատուռներով, խաչքարերով, քարանձավներով հարուստ Գանձաքարը տնտեսապես հզորանալու հնարավորություն կունենա հենց իր ընգծված մշակութային հարստությամբ, բնության և մշակույթի անխախտ ներդաշնակությանբ:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1. Գանձաքարի մշակութային գանձերը

Երկու մնայուն արժեք կա, որով կարող ենք օժտել մեր երեխաներին: Մեկն արմատներն են, մյուսը՝ թևերը:

Հոդինգ Քարթեր

Զարմանալիորեն գեղեցիկ է մեր բնաշխարհը: Ով գեթ մեկ անգամ եղել է այստեղ՝ Տավշո աշխարհում, հատկապես Գանձաքարում, վստահաբար, հմայվել է բնության անասելի կանաչ թովչանքով, գետ-գետակների անուշ կարկաչով,լ եռների խրոխտ նայվածքով, պատմության լուռ ներկայությամբ:
Պարզ է, որ այստեղ բնակվողներս, և ոչ միայն մենք, այլ բոլորս, հնարավորություն ունենք մոտենալ մեր արմատներին, առնչվել մեր հարուստ մշակութային գանձարանին, ուսումնասիրել մեր լեռնապատ, առասպելապատ, հեքիաթային աշխարհը, մեր դարավոր պատմության նշխարները:
Ահա գյուղի համայնապատկերը Տեսիլք (Բուդուր) լեռան կատարից: (նկ.1,2,3)

Գանձաքար գյուղը գտնվում է Տավուշի մարզում, մարզկենտրոն Իջևանից 4 կմ հեռավորությամբ: Լեռների գրկում ծվարած գյուղը փռված է Ուրթաջուր գետի և նրա երեք վտակների երկայնքով: Գյուղը հիմնադրվել է 1860-ական թվականներին և անվանվել է Աղդան, Վերին Աղդան: 1978թ.-ից գյուղը վերանվանվել է Գանձաքար: Եվ որքան փորձում ենք ճանաչել մեր հայրենի բնօրրանը և մարդկանց, այնքան համոզիչ ու բնութագրական է դառնում անվանումը:

Ճիշտ է, XIX դարի սկզբներին է հիմնադրվել բնակավայրը, սակայն շուրջբոլորը գտնվող պատմության լուռ վկաներ են, որոնք առավել քան խոսուն են և վկայում են, որ անառիկ լեռների լանջերին եղած ամրոցների, բերդերի բեկորները, մատուռները, բնակիչների կողմից Եղծի-Եղցի անվանվող եկեղեցիները դարեր, հազարամյակներ առաջ գոյություն ունեցած բնակավայրերի հետքերն են: Նրանք իրական գանձեր են… (նկ. 4)



Գյուղի շրջակայքի «Հին գյուղատեղ», «Ներքին կամ փոքր Լաչինղայա», «Խոջաբազար», «Վերին կամ Մեծ Լաչինղայա» բնակատեղերը և մեզ հասած բազմաթիվ հուշարձանները վկայում են, որ միջնադարում այստեղ բավականաչափ մարդաշատ է եղել:
Վ. Լաչինղայա եկեղեցին գտնվում է գյուղից մոտ 5 կմ հարավ-արևելք: Պահպանվել է արևելյան պատը: Թաղածածկ, մեծ (11Х5 մ) շինություն է, ներսը կրաշաղախով սվաղած, որի վրա մինչև հիմա էլ նկատվում են որմնանկարների մնացորդներ: Արձանագրություններ չկան, վերագրվում է XII—XIII դարերին:
Զույգ եկեղեցիները գտնվում են գյուղից 3 կմ հարավ-արևելք, ներքին Լաչինղայա գյուղատեղում: Արևելյան եկեղեցին տեղացիները կոչում են Եղցաձորի ս. Նշան: Սա փոքր (6Х4 մ), թաղակապ շինություն է: Գտնվում է կիսավեր վիճակում:
Երկրորդ եկեղեցին, որը արձանագրության մեջ կոչվում է Աստվածածին, ավելի մեծ է: Սա նույնպես թաղակապ ծածկ ունի: Գլխավոր խորանի բեմը քանդված է: Արևմտյան դռան ճակատակալ քարի վրա փորագրված է նվիրատվական մի արձանագրություն որը եղծվել է: Զույգ եկեղեցիների շրջակայքում ավերակների մնացորդներ են:
Բուդուրի Ամրոց: Գտնվում է Գանձաքար (նախկին Վ. Աղդան) գյուղից 2 կմ արևելք, համանուն լեռան գագաթին: Այստեղից լավ է երևում Աղստևի ամբողջ հովիտը և Փոքր Կովկասի լեռնաշղթան, ինչպես նաև Ենոքավանի ամրոցների խումբը: Բավականաչափ ընդարձակ (մի քանի հեկտար) տարածություն են շրջափակում վաղ հայկական այս ամրոցի պարսպապատերը: Պատերը եռաշարք են, որոնց լայնությունը հասնում է մինչև 3 մ, շարված խոշոր, անմշակ քարերով, առանց շաղախի: Նման է կիկլոպյան բերդերին:
Ամրոցի հյուսիսային կողմից 213 մ երկարությամբ մեկ շարքով, իսկ արևելյան կողմից 3մ բարձրությամբ երկշարք պատեր են շարված, և միայն արևմտյան կողմից ամրոցը պաշտպանված է անմատչելի քարաժայռով: Կանգուն են մնացել պարսպապատերի որոշ հատվածները:
Ամրոցի հարավային թեք լանջերում, ուր հնարավոր չի եղել բնակվել, թաքցվել են անասունները, իսկ հյուսիսային մասում նկատվում են բնակարանների հիմնապատեր: Հարավային կողմում պահպանվել են 2 - 3 մ լայնությամբ երկու մուտքը:
Ամրոցում կատարված պեղումների ժամանակ հայտնաբերվել են 12 կավե կարմիր, սև և երկնագույն սափորներ ու հնագիտական այլ իրեր, որոնք կարելի է թվագրել մ. թ. ա. IV—III դդ.:
ԹԱՆԻԿԻ ԱՄՐՈՑ: Տեղացիները անվանում են «Հակոբ Բեկի խաչ»: Միջնադարի փոքրիկ ամրոց է, գտնվում է Գանձաքար գյուղի արևելյան կողմում, «Թանիկներ» կոչվող Հանդամասում, փոքր բլրի վրա: Ամրոցը գրավում է մոտ մեկ հեկտար տարածություն: Շրջափակված է հաստ պարսպապատերով, ներսում նկատվում են բնակարանների հիմնապատերը:
ՄԱՆԹԱՇ ԿԱԼԱ (ԿԱՐԱ-ԿԱԼԱ) ԱՄՐՈՑ: Մանթաշ-Կալան Բագրատունիների ժամանակաշրջանի ամրոցներից է, գտնվում է գյուղից մոտ 7 կմ հյուսիս-արևմուտք, Աղստև գետի աջ ափի անտառապատ լեռան գագաթին, շրջափակված է լայն, բրգավոր պարիսպներով: Ամրոցն ունի երկու մուտք, որոնց դռները եղել են ամբողջական մեծ քարերից: Լեռան անցանելի հատվածները ամրացված են ամուր պարսպապատերով, որոնք ունեն բրգաձև աշտարակներ, պատերի մեջ կլոր, փոքր անցքեր: Պարսպապատերը սև քարից են, ամուր կրաշաղախով: Ամրոցը կրկնահարկ է, սանդղավանդի ձևով, առաջին հարկը բավական ընդարձակ է, հյուսիսից բարձրանում է մի այլ քարաժայռ, որի վրա տեղավորված է ամրոցի երկրորդ աստիճանը՝ միջնաբերդը, այն ամրացված է պարսպապատերով, արևելյան կողմից ունի առանձին մուտք: Միջնաբերդը զբաղեցնում է փոքր տարածություն: Հիմնական մուտքը

բարձրավանդակի հարավ-արևմտյան անկյունից է, լեռնապարսպի արևելյան կողմից: Ամրոցի երկու մասերում էլ նկատվում են կառույցների հիմնապատերը:
Պատմական աղբյուրներում Մանթաշ-Կալան միշտ հիշատակվում է Կայան բերդի հետ միասին, որից կարելի է ենթադրել, որ այն կառուցվել է X դարի առաջին քառորդում:

ԱՂՋԿԱ ԲԵՐԴ (ԿԸՋ-ԿԱԼԱ): Ամրոցը գտնվում է Իջևան քաղաքից մոտ 16 կմ դեպի հարավ-արևմուտք, անտառապատ սարի գագաթին, որը բոլոր կողմերից եզերված է բարձր ժայռերով, միաժամանակ պաշտպանված է արհեստական, բրգավոր պարիսպներով, մուտքի ներսում՝ փոքրիկ պահակատուն:
Ամրոցի ներսում ավերված բնակարաններից բացի, կան երկու ջրամբար և խաչաձև հատակագիծ ունեցող մի եկեղեցի: Ջրամբարներից մեկը շատ մեծ է: Ջուրը թրծված կավե խողովակով նախ լցվել է մի փոքրիկ ավազանի մեջ, իսկ այնտեղից մի այլ խողովակով թափվել մեծ ջրամբարը:
Ամրոցի բոլոր շինությունները, ինչպես և պարիսպները կառուցված են կապտավուն բազալտից, ամուր կրաշաղախով: Այս ամրոցի պատմահնագիտական արժեքը շատ մեծ է, որովհետև լավ է պահպանվել նրա ամբողջականությունը:
Ամրոցի և ավերակ բաղնիքի մասին ժողովրդի մեջ մի ավանդություն է մնացել: Ասում են, եղել է մի գեղեցիկ աղջիկ, որն ունեցել է իր զորքը: Շատ իշխաններ, հրապուրվելով նրա գեղեցկությամբ, ցանկացել են ամուսնանալ, բայց նա մերժել է բոլորին: Երբ ոչ մի կերպ չեն կարողացել համոզել, ցանկացել են ուժով տիրել: Իշխանուհին, հավաքելով իր տիրապետության տակ գտնվող մարդկանց, կառուցում է ամրոցը և իր զորքով պատսպարվում այնտեղ: Աղջկա համառությունն ու քաջագործությունները ավելի են գրգռում իշխան Մանթաշին, և Կըզ-Կալայի դիմաց կառուցում է Մանթաշ-Կալան և հաճախակի հարձակումներ գործում Կըզ-Կալայի վրա: Դրանք բոլորն էլ անհաջողությամբ են վերջանում, միշտ հաղթում է աղջիկը: Մի անգամ էլ նա զորքը ուղարկում է Մանթաշ-Կալայի վրա: Կռվում նորից հաղթում է աղջկա զորքը: Դրանից հետո Մանթաշը հաշտություն է խնդրում: Նրանք պայմանավորվում են, որ յուրաքանչյուրը մնա իր ամրոցում, բայց, ի նշան բարեկամության, Աղստև գետի ափին (այժմյան Համամի ճալայում) կառուցում են վերը նշված բաղնիքը:
Գմբեթ եկեղեցի: Գմբեթ եկեղեցին տեղացիները անվանում են Քյումբեթ: Գտնվում է գյուղից 4 կմ հարավ-արևելք, թաղածածկ շենք է՝ կառուցված տարբեր մեծության քարերով և կրաշաղախով: Կտուրը երկթեք է, ծածկված սրբատաշ սալաքարերով: Եկեղեցու շրջակայքում գերեզմանոց է:
Տախտաեղցի եկեղեցի: Տախտաեղցի եկեղեցին կառուցվել է նույնանուն հանդամասում, փոքր բարձունքի վրա: Կառուցված է կրաքարի մանր կտորներով և կրաշաղախով: Ծածկը թաղակապ է եղել, այժմ կիսավեր է: Կանգուն են արևելյան խորանը և 2 մ բարձրությամբ շենքի պատերը: Եկեղեցու հյուսիսային կողմում և շրջակայքում կան մի քանի անարձանագիր խաչքար:
Ս. Կիրակի մատուռ: Ս. Կիրակի մատուռը գտնվում է Խոջաբազար գյուղատեղում (տեղացիները այս հուշարձանը կոչում են Խչբազարի Խաչ), գյուղից 2 կմ հարավ-արևելք: Ժայռի վրա կառուցված գմբեթավոր շինություն է: Ներսից պատերի անկյուններում ագուցված են չորս պահունակներ, որոնց վրա հենվում են ծածկի կամարները, իրենց վրա կրելով փոքրիկ գմբեթը՝ սրբատաշ գլանաձև թմբուկով և սրածայր վեղարով: Պատերի մեջ բացվում են մեկական փոքր ու նեղ լուսամուտներ: Մատուռը կանգուն է, ճակատակալ քարին և դռան

շրջանակի խաչքարի վրա կան արձանագրություններ: Հուշարձանի շուրջը տարածվում է գերեզմանոցը՝ անմշակ տապանաքարերով:

2. Գանձաքարի «Եղցին»՝ թաքնված գեղեցկուհին

Եվ այսպես, այսքան հարուստ պատմամշակութային կոթողներից մենք ընտրել ենք գյուղի բնակիչների կողմից Բուդուրի «Եղծի» կամ «Եղցի» կոչվող մատուռի ուսումնասիրությունը:
Բնության գողտրիկ գրկում մարդկանցից փորձում է թաքնվել Գանձաքար գյուղի «Եղցի»-ներից մեկը, որն ինչքան էլ փորձել է չնկատվել՝ գլուխն ավելի խոնարհելով, սակայն եղել և մնում է առեղծվածային ուխտատեղի, մոտակա տարածքում բնակվողների աղոթքն առ Աստված ուղղելու և Աստծո հետ կապ ստեղծելու վայր:
Եվ ինչու հենց այս «Եղցին»... Փոքրիկ մատուռի մասին տեղեկությունները սակավ են, և գուցե այդ է պատճառը, որ այն ավելի հետաքրքիր է:
«Եղցի» եկեղեցին, որը թվագրվում է որպես 12-րդ դարի շինություն, կառուցված է Բուդուր լեռան հյուսիսային լանջին՝ անտառային բացատում: Շինությունը փոքր է, կառուցված է անմշակ որձաքարերով: Ճակատային կամարաձև քարը տեղում չէ, թեև հստակ երևում է, մուտքը զարդարել է ճակատաքարը: Արևելյան պատին կա փոքրիկ լուսամուտ, լուսամուտ ունի նաև արևմտյան պատին՝ ճակատային հատվածում: Ծածկը թաղակապ է:

Ըստ մեր չափումների՝ կառույցի բարձրությունը 3.2-3.4մ է, լայնությունը՝ 3.7-4.0մ, երկարությունը՝ 4.0-4.5մ: Մուտքի բարձրությունը 1.37մ, լայնությունը՝ 0.85մ, պատերի հաստությունը 0.7մ է: (նկ.5, 6)

Նկատելի է նաև, որ ավելի ուշ վերանորոգելու փորձ է կատարվել. առկա են շինարարության մեջ նոր ժամանակներում կիրառելի նյութերի հետքեր: Ցածրադիր մուտքը արևմտյան կողմից է: Մատուռի մուտքի մոտ, աջ կողմի պատի տակ, ներսում կան ամբողջությամբ պահպանված խաչքարեր, խաչքարերի բեկորներ: Խաչքարերի բեկորներ կան նաև պատերի մեջ տեղակայված փոքրիկ խոռոչներում, այնքան աննկատ, կարծես փորձել են թաքցնել մարդկանց աչքից, կարելի կարծել՝ շինաքար են գործածել: Դրանք էլ ավելի

գեղեցիկ են, քան ամբողջովին պահպանված խաչքարերը (նկ.7, 8, 9)։ Բոլորն էլ անարձանագիր են:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
Ի՞նչ են պատմում քարերը

Ինչպես նշեցինք, բոլոր խաչքարերը, սալաքարերն անարձանագիր են, սակայն կարելի է անել որոշ ենթադրություններ:
Մատուռից դուրս՝ աջակողմյան պատի տակ գտնվող խաչքարի կողին փորագրված էր «Մալաքյան», նույն խաչքարի առջևի մասում կա փոքրիկ ավազան, չգիտենք ինչ կիրառություն ունեցած կլինի, բայց դրսում լինելով հանդերձ՝ լավ է պահպանված: (նկ.10)

Մատուռի բակային հատվածում կան որոշակի տեսքով սալաքարեր, որոնք հիշեցնում են տապանաքար - դամբարանաքարեր: Նմանատիպ քարեր և քարակուտակումներ կան մատուռի ողջ շրջակայքում՝ 25-30մ շրջանագծով: Կա նաև պատի պահպանված հատված՝ կանոնավոր անկյուն, ինչից կարելի է ենթադրել, որ մատուռը շինության պահպանված մի հատվածն է: Մեր ուսումնասիրության ընթացքում գտանք կավե ամանի պռունկ հիշեցնող մի բեկոր, որը մեզ հուշում է, որ կամ կեցավայր է եղել, կամ դամբարան, որտեղ թաղվել են նաև կենցաղային իրեր: Իսկ եթե մատուռի շուրջն են դամբարանները, ենթադրում ենք, որ այն որևէ երևելի մարդկանց է ամփոփել:
Ըստ Ա. Դովլաթբեկյանի տրամադրած նյութի խաչքարերից 2-ը՝ մեկը, որի վրա մոմ է վառած, մյուսը, որը փոքր պատվանդանին է կանգնեցված, ընդգրկված են պետական ցուցակում, Հանրապետական նշանակության հուշարձաններ են համարվում: Խաչքարերը 9-րդ դարի խաչքարեր են համարվում: (նկ. 7, 8)
Տարածքում առկա է նաև 9-13-րդ դարերի գերեզմանոց: Եկեղեցին որոշ աղբյուրներ անվանել են նաև «Բուդուրի Եղցի»՝ անունը կապելով «Բուդուրի քար» ամրոցի հետ:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
Մոռացությունից փրկված պատառիկները

Դաշտային ուսումնասիրություններին զուգահեռ սկսեցինք հանդիպել գյուղի տարեց մարդկանց, մարդկանց, որոնք փոքրիշատե տեղյակ կլինեին մատուռի հետ կապված պատմություններին, զրույցներին, ավանդություններին, իրադարձություններին, բարեպաշտ, հավատավոր տատիկներին, ովքեր Խորհրդային Հայաստանում քրիստոնեական պաշտամունքային վայրեր չգնալու արգելքին երբեք չէին հնազանդվել: Ցավոք, շուրջ մեկ դար ապրած տատիկների հիշողություններն այնքան էլ վառ չէին, բայց մի բան լավ էին հիշում, որ «Եղծի» շուտ-շուտ են գնացել, որ անուն է ունեցել և ավելացնում էին. «Նրա ֆեքուն մատաղ» («Նրա հոգուն մատաղ»):

Ի տարբերություն տատիկների՝ պապիկներն էլ պատմում էին գանձեր որոնողների մասին՝ մի մասը խորին հավատով, որ եկել են Վրաստանից կամ Արցախից, ավերել են մատուռը, գտել են գանձերը և տարել: Մյուսներն էլ պնդում էին, որ, ճիշտ է, փնտրել են, ավերել են, բայց ոչինչ չեն գտել:

Պատմում են, որ հայոց արքաներից մեկի մանկահասակ որդին մահանում է, և նրա մարմինը ոսկյա օրորոցով ամփոփում են մեր «Եղցի»-ներից մեկում: Իբրև այս պատմությունը կարդացել

են գրավոր աղբյուրներում և եկել են որոնելու ոսկյա օրորոցը:

Մեկ այլ զրույցի համաձայն՝ երեք ղարաբաղցիներ հին գրքերից կամ մագաղաթներից իմացել են, ու արևելյան մասի փոքրիկ լուսամուտի ներքևում՝ խաչքարի տակ, ոսկով փոքրիկ կճուճ կա, եկել են, հանել են խաչքարը, գտել կճուճը և տարել:

Հանդիպեցինք արմատներով մեր համագյուղացի, Իջևանի երկրագիտական թանգարանի աշխատակից Նարիման Թանանյանի հետ: Հետաքրքիր և բովանդակալից զրույցի ընթացքում մեզ պատմեց վերը շարադրված պատմությունը: Նշեց, որ եկեղեցին կառուցվել է 12-րդ դարում, Զաքարյանների իշխանության ժամանակաշրջանում: Եվ այն անվանվել է Սուրբ Նշան: Նաև հավելեց, որ տարիներ առաջ եկեղեցին բարեկարգվել է Իվան Մալաքյանի կողմից:


Միջնադարյան կարաս
Հակորյան Թորոս
գ. Գանձաքար

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
Խոսում են փաստերը



ՎԵՐՋԱԲԱՆ

Մի՛ հարցրու, թե հայրենիքդ ինչ կարող է անել քեզ համար: Հարցրու՝ դու՛ ինչ կարող ես անել հայրենիքիդ համար:

Աշխարհում շատ պետություններ կան: Մի քանիսը՝ հզոր, մյուսները՝ ոչ այնքան, մի մասն էլ՝ ճնշված: Եղել են և պետություններ, որ վերացել են:

Ինչ-որ երկրներ կան, որ հոգում են իրենց քաղաքացիների շատ հոգսեր, որոնց հովանու տակ քաղաքացիներն իրենց պաշտպանված են զգում: Բայց ո՞վ է այդ երկրներին այդպիսին դարձրել: Նրանք, ովքեր իրենց աղքատը դարձրել են հարուստ, սահմանափակը՝ անսահման, քանդվածը՝ շեն, անապահովը՝ ապահով: Ինչո՞վ ենք իրենցից պակաս:

Տունը քարը քարին դնելով է շենանում, ոչ թե դրվածը քանդելով՝ միայն նրա համար, որ դնողը դու չես եղել: Ու երբ բոլորի հոգածությունը սեփական հողի, գյուղի, քաղաքի, երկրի հանդեպ գումարվում է իրար, դառնում է մի հզոր ուժ, որն էլ հայրական հոգածության, մայրական ջերմության պես կարող է զգալ ամեն ոք իր հայրենիքում ու հավատալ, որ հայրենի տան պատերն էլ են ջերմացնում:

«Պատմության մրցույթներ» հայրենաճանաչողական - գիտակրթական մրցույթը հրաշալի հնարավորություն էր ճանաչել հայրենիքի քո անկյունը, տարիներ շարունակ ապրելով այս դրախտ հիշեցնող վայրում՝ այնպես չէր, որ այսքան հանգամանորեն ուսումնասիրել , ճանաչել էինք մեզ շրջապատող նյութական մշակույթը: Մեկ այլ դիտակետից ավելի լավ ուսումնասիրեցինք գյուղը, շատ ավելի լավ ծանոթացանք գյուղի պատմությանը, նոր բացահայտումներ արեցինք, շփվեցինք գյուղի տարեց ու խելացի բնակիչների հետ, մենք իրենց ճանաչեցինք, իրենք՝ մեզ: Որքան որ ունեցանք բացահայտումներ, նույնքան ավելացան հարցերը, և մի տեսակ կարծես մեր երևակայությունը, միտքն ամբողջությամբ վառվում է անցյալն իմանալու, պատմությունդ իմանալու տենդով:

Հասկացանք, որ մեր մշակույթը պետք է ճանաչենք, մեր մշակույթը ճանաչելով՝ կճանաչենք մեզ և մեր հայրենիքը:

Հասկացանք, որ ամենօրյա հոգնածություն է պետք սեփական հողի, գյուղի հանդեպ:

Վերամիավորեցինք մարդու և մշակույթի կապը, գիտակցեցինք, որ այդ կապն անքակտելի է:

Ձեռք բերեցինք գիտելիք, փորձ, հմտություններ:

Համապարփակ ուսումնասիրեցինք գյուղի պատմությունը, գյուղի հրաշալի մարդկանց հետ շփվելու հնարավորություն ունեցանք, նրանցից լսեցինք այդ պատմությունները:
Տարբեր գրավոր աղբյուրներ գտանք և ուսումնասիրեցինք:
Իմացանք բոլոր պատմամշակութային հուշարձանների մասին հավաստի տեղեկություններ:
Հատկապես ուշագրավ տեղեկություններ իմացանք «Եղցի» մատուռի վերաբերյալ: Համեմատեցինք, համադրեցինք, վերլուծեցինք և ամենակարևորը՝ սիրեցինք վայրը, մատուռը, խաչքարը, շրջակա տարածքը: Հոգ տարանք, մաքրեցինք, հանգստացանք հենց մատուռի բակում՝ երջանկության զգացումով:

Երբ թերթում ենք անցյալի փակ էջերը	
Խմբային աշխատանք, ֆոտո պատմություն	
Մարզ	Շիրակ
Համայնք	Գյումրի
Դպրոց	«Ֆոտոն» վարժարան
Ուսուցիչ	Աշխեն Մինասյան
Խմբի անվանում	«Ամենափրկիչ»
Աշակերտներ	Մինասյան Լառա, Մովսիսյան Էմմա, Ոսկանյան Թամարա, Հովհաննիսյան Սամվել, Մխիթարյան Դավիթ, Քոչարյան Արտյոմ

Երբ թերթում ենք անցյալի փակ էջերը

Խորհրդային տարիները (հատկապես 1937թ.), հայտնի են «սև տարիներ» անունով: Հալածանքների էին ենթարկվում ոչ միայն շարքային մարդիկ, այլ նաև եկեղեցին ու հոգևորականությունը: Դրա վառ ապացույցն է Գյումրու «Յոթ Վերք» եկեղեցու դիմաց տեղադրված այդ տարիներին զնդակոծված խաչն ու զնդակահարված հոգևորականների անուններով հուշատախտակները:
Այստեղ շատ լավ է երևում խորհրդային իշխանությունների վերաբերմունքն եկեղեցու ու հավատքի նկատմամբ: Ականատեսներն ասում են որ, գմբեթի պայթեցման ու խաչի իջեցման արարողությունները շատ խորը հետք են թողել եկեղեցու, քաղաքի ու ալեքսանդրապոլցիների սրտում: Օրը արևոտ էր, բայց եթե լսենք ականատեսներին, օրը մռայլ էր ու ամպամած: Եվս մեկ ապացույց, թե ինչպիսի ցավով ու դառնությամբ են լցված եղել մարդկանց սրտերն այդ պահին:



Այս նկարները ընդամենը մի պատառիկ են այն ամենից, ինչի միջով անցել են ալեքպոլցիները: Այս հիշատակարանում ներկայացված են հալածանքների ժամանակ զնդակահարված հոգևորականների անունները: Նմանատիպ ևս երեք հիշատականներ գտնվում են «Յոթ Վերք» եկեղեցու դիմաց՝ որպես հիշատակ այն ծանր ժամանակների: Նշված անուններից Տ. Արտակ եպս. Սմբատյանը եղել է Շիրակի թեմի առաջնորդը:

Գյումրեցին, որը հայտնի էր որպես ջերմ եկեղեցասեր և իր քաղաքում ուներ կառուցած 7 եկեղեցի, մեծ խանդավառություն էր ապրում «Ամենափրկիչ» եկեղեցու խաչի վեր բարձրացման արարողության ժամանակ: Յուրաքանչյուր ալեքսանդրապոլցի ուզում էր իր ներդրումն ունենալ եկեղեցու շինարարության մեջ: Դրա ապացույցն էր շատ ալեքպոլցիների անվճար աշխատելը, մեծահարուստ Գորոյան ընտանիքի կողմից գմբեթի խաչի նվիրաբերումը 1892 թվականին: Փառահեղ խաչի քաշը մոտավորապես 6 փութ էր: Ամբողջ Ալեքսանդրապոլը հավաքվել էր եկեղեցու դիմաց խաչի վեր հանման արարողությանը ներկա գտնվելու: Հավաքվածներից որոշները մինչև հիմա հիշում են այն խնդությունը ու ուրախության ճիչերը, որոնցով լցված էր քաղաքը այդ պահին:

Եկեղեցու վեցփթանոց խաչը հնարամտորեն վեր բարձրացնելու և Մայր գմբեթի ծայրին ամրացնելու համար Մանուկ Պետրոսյանը ժողովրդից ստացել է Արդար Մանուկ անունը: Օրը արևոտ չէր, բայց ալեքպոլցիների աչքերը լցված էին խնդությամբ, քանզի նրանց երազած «ամենամեծ ու ամենաբարձր ժամ» ունենալն այլևս երազանք չէր, այլ՝ իրականություն: Եկեղեցու ամբողջ շրջակայքը պատված էր ջերմությամբ ու հավատով, որ Ամենափրկիչը կդառնա Ալեքսանդրապոլի այցեքարտը, նրա գլխավոր խորհրդանիշը: Ոչ ոք այդ պահին չէր գիտակցում, թե ինչ դաժան ճակատագիր է սպասվում փառահեղ եկեղեցուն:

Ասում են՝ մի անգամ հունական եկեղեցուց դուրս են արել հայ հավատացյալի, դրանով իսկ գյումրեցիներին «դրդել» Ամենափրկիչը կառուցելուն: Այն կառուցվել է 1858-1873 թվականների ընթացքում, որմնադիր վարպետ Թադեոս Անտիկյանի կամ Անտիկենց Թադոսի ու ճարտարապետ Արդար Մանուկի կամ Մանուկ Պետրոսյանի ջանքերով: Կառուցման համար հավաքված գումարի կեսը նվիրել է Դրմփյանների ընտանիքը այն բանից հետո, երբ Դրմփոնց աղան խոստացել է որ, կկրկնապատկի այն գումարը, որը կհավաքվի ամբողջ քաղաքի ջանքերով:

Ոմանք կարծում են, որ Ամենափրկիչը Անիի Սբ. Կաթողիկե եկեղեցու կրկնօրինակն է, սակայն դա այդպես չէ: Եկեղեցու կառուցման համար նախագիծ չեն գծել, այլ վերցրել են Անիի եկեղեցու նախագիծը: Այսինքն՝ կառուցման մեխանիզմը նույնն է, բայց Ամենափրկիչը Կաթողիկե եկեղեցու կրկնօրինակը չէ: Վերջինիս նախագծի համաձայն եկեղեցում կառուցվել է նաև նկուղ՝ դրանով իսկ Ամենափրկիչը դարձնելով Ալեքսանդրապոլի միակ եկեղեցին, որը ուներ նկուղային հարկ:

1880-90-ական թվականներին, երբ քաղաքը Ռուսական կայսրության ռազմավարական և տնտեսական ֆորպոստն էր, եկեղեցուն կից կառուցվել է մեծ թեմական դպրոց, որը քանդվել է 1960-ականներին քաղաքի գլխավոր հրապարակի վերակառուցման ժամանակ: Թեմական կամ ծխական դպրոցը գործել է երկար ժամանակ և նախատեսված է եղել միայն տղաների համար: Քանի որ ծխական դպրոցը համարվում է եկեղեցուն կից կառույց, հետևաբար խորհրդային տարիներին հալածանքների ենթարկվեց ոչ միայն եկեղեցին, այլ նաև նրա հարևանությամբ գործող ծխական դպրոցը:

Եկեղեցու վերականգնման նախագիծը, որը հեղինակեց տեղացի ճարտարապետ Ռաֆայել Եղոյանը, ի կատար ածվեց 1964 թվականին: Այդ ընթացքում եկեղեցին օգտագործվում էր որպես աշխարհիկ կառույց: Այն սկզբում դարձրեցին գարու պահեստ, հետո՝ ախոռ: Ավելի ուշ եկեղեցին վերածվեց դասական երաժշտության համերգասրահի: Այս դահլիճում ելույթ են ունեցել աշխարհահռչակ երաժիշտներ՝ օպերային երգչուհի Գոհար Գասպարյանը, սոպրանո Լուսինե Զաքարյանը, «Մոսկվայի վիրտուոզներ նվագախումբը» (գեղարվեստական ղեկավար՝ դիրիժոր և ջութակահար Վլադիմիր Սպիվակով), թավջութակահար և դիրիժոր Մստիսլավ Ռոստրոպովիչը և այլոք:



Եկեղեցու 36մ բարձրությամբ զանգվածին չկարողացավ վնասել 1926 թվականի կործանարար երկրաշարժը: Պատճառն այն էր, որ հմուտ շինարարները, երկրաշարժներով հարուստ վայրում տարերքի ուժը չեզոքացնելու համար, շենքը կառուցել են քաղաքի կենտրոնով հոսող գետակի ճահճոտ ափին, որը ցնցումների դեպքում պիտի խաղար և խաղացել է բարձի դեր՝ նվազագույնի հասցնելով ցնցումների ավերիչ ուժը: Այսպես եկեղեցին կարողացավ դիմակայել առաջին երկրաշարժին, բայց, ցավոք, նույն խիզախությամբ չկարողացավ դիմակայել երկրորդին:

Դժբախտաբար, 1988-ի Սպիտակի երկրաշարժը հողին հավասարեցրեց կառույցի կեսից ավելին և դադարեցրեց նրա գործունեությունը: Գյումրեցին, որ տեսավ փլված «Ամենափրկիչը», ցավից ոռնաց ու մտածեց, որ աշխարհն է ավերվել, քաղաքը չկա: Զարմանքից քարացավ, քանի որ եկեղեցին կարողացել էր շրջանցել 1926 թվականի երկրաշարժը: Զանգակատան գմբեթը, որն ընկել էր երկրաշարժի ժամանակ, տեղադրեցին եկեղեցու կողքին՝ որպես Սպիտակի երկրաշարժի հիշատակ: Այն մինչև հիմա էլ գտնվում է այնտեղ:

1988թ. Ամենափրկիչը փլվեց, որովհետև ճարտարապետները հանձնարարել էին կամարամածներ կապել: Դրսից և ներսից կապած մետաղյա կամարամածները, որոնք հասնում էին մինչև գմբեթ, երկրաշարժի ժամանակ ճոճվել էին տարբեր ուղղություններով, և գմբեթը փլվել էր: Բացի այն, որ եկեղեցին մեծ նշանակություն ուներ քաղաքի ու բնակչության համար, այն նաև վերածննդի խորհրդանիշ դարձավ, որովհետև այդ մասշտաբի մեծ կառույցը քանդված վիճակում տեսնելը հոգեբանական մեծ ճնշում ունեցավ քաղաքացիների վրա:

Չնայած խորհրդային տարիներին իշխանությունների վարած բիրտ քաղաքականությանը՝ Աստծո օրհնությամբ և կամոք պահպանվեց ու կործանումից փրկվեց մի չքնաղ կառույց, որը պարզ ցույց է տալիս, թե ինչքան աստվածահաճո գործ էր կատարել գյումրեցին: Վերակառուցման համար պահանջվող գումարը հավաքվեց բարերարների և քաղաքի բնակիչների հանգանակություններով: Այսպիսով, եկեղեցին ամբողջական շրջապտույտ կատարեց դեպի իր ակունքները՝ ապացուցելով իր անփոխարինելի դերը որպես Գյումրու հոգևոր, սոցիալական և ճարտարապետական խորհրդանիշ: Գյումրեցին մի հարցում համոզված է, որ երբ ավարտվեցին «Ամենափրկչի» վերականգնողական աշխատանքները Գյումրին կսկսի բարգավաճել:

Ամենափրկչի պատմությունը հուզիչ և միաժամանակ ոգևորող է ոչ միայն գյումրեցիների ու ընդհանուր առմամբ հայերի համար: 2011 թվականի փետրվարի 22-ին Նոր Զելանդիայում տեղի ունեցած ավերիչ երկրաշարժը քանդեց Christchurch քաղաքի մեծ մասը, այդ թվում նաև եկեղեցին: Վերջինս կառուցվել էր 1864-1904 թվականների ընթացքում և վերակառուցվել մի քանի անգամ: Եկեղեցին վերականգնելու նպատակով շինարարները այցելեցին Գյումրի, որպեսզի ծանոթանան Ամենափրկչի նախագծին և վերակառուցման աշխատանքներին ու նույն կերպ վերականգնեն Christchurch-ի եկեղեցին:

Ամենափրկիչ եկեղեցու ցավոտ անցյալն ու լուսավոր ապագան	
Անհատական աշխատանք, շարադրություն	
Մարզ	Շիրակ
Համայնք	Գյումրի
Դպրոց	«Ֆոտոն» վարժարան
Ուսուցիչ	Աշխեն Մինասյան
Աշակերտ	Մինասյան Լառա

Ամենափրկիչ եկեղեցու ցավոտ անցյալն ու լուսավոր ապագան

1937թ.ամռան մի արևոտ ու լուսաշող օր էր: Պայծառ արևի տակ անչափ մութ, մռայլ ու ցուրտ օր էր Լենինական քաղաքի հավատացյալ, աստվածավախ խավի համար: Այդ օրն էր, որ խոր տնքում ու ճմլվում էր աշխարհահռչակ կոթող, ճարտարապետական հրաշք, գյումրեցիների սրբատեղի Ամենափրկիչ եկեղեցու ու նրա կառուցողների հոգիները… (Լ. Պետրոսյան «Ավազին գրված կտակ», էջ 44)

Իսկ ովքե՞ր էին վերջինիս կառուցողները: Եկեղեցու շինարարությունն սկսվել է 1858թ. և ավարտվել 1873թ: Եկեղեցու կառուցման ուստաբաշին՝ վարպետաց վարպետը, եղել է Թադևոս Անտիկյանը (Անտիկենց Թաթոսը), փայտի աշխատանքները ղեկավարել է վարպետ Մանուկ Պետրոսյանը, որը եկեղեցու վեցփթանոց խաչը հնարամտորեն վեր բարձրացնելու և մայր գմբեթի ծայրին ամրացնելու համար ժողովրդից ստացել է Արդար Մանուկ անունը:

1882թ. Ձիթողցյանների միջոցներով հյուսիսային ճակատին կից կառուցվել է փոքրիկ գավիթ: Եկեղեցուն կից գործել է հայկական ծխական դպրոց: Դպրոցի շենքը քանդվել է խորհրդային տարիներին:

Սովետը որոշել և պատրաստվում էր պայթեցնել սրբավայրը:

Ամենափրկիչ եկեղեցին գտնվում է Գյումրու կենտրոնական հրապարակի հարավային մասում, որին միանում են գլխավոր երեք փողոցներ՝ Աբովյան, Պուշկին (այժմ՝ Գայ) և Շահումյան անվանումներով: Հրապարակին են միանում նաև չորս այլ փողոցներ:

Այդ բոլոր փողոցների մուտք ու ելքը դադարեցված էր՝ փակված բեռնատար ավտոմեքենաներով: Անանցանելիությունն էլ հսկվում էր զինվորներով և միլիցիայի աշխատողներով՝ բոլորն էլ զինված: Ստեղծվել էր ոչ բնական «պարիսպ», որի հետևում պարտադրված բերվել և հավաքվել էր վախվորած բնակչությանը: Պուշկինի անվան համար վեց դպրոցին հարող փողոցի հատվածում հավաքվածների մեջ էին նաև հայրիկս և նրա դասընկեր, հետագայում «Ամենափրկիչ» եկեղեցու քահանա տեր Գյուտը: Նա ամբողջ մարմնով դողում էր, կարծես ձմռան սառնամանիք լիներ, իսկ ինքը՝ անդամամերկ: Կուչ էր եկել, փոքրացել, ատամները շրխկոցով զարկվում էին իրար, ամբողջ մարմինը ցնցվում էր, միայն լսվում էր լալահառաչ աղոթքի մրմունջը (Լ. Պետրոսյան «Ավազին գրված կտակ», էջ 44-45):

Երևույթի սարսափելիությունը կարելի է պատկերացնել միայն այն փաստով, որ գյումրեցին անչափ եկեղեցասեր էր և իր քաղաքում յոթ եկեղեցի էր կառուցել: Գուսան Ջիվանին այդ փաստի առիթով այսպես է ասել.

—Իրենք հաց չունեն ուտելու համար,

Յոթ հատ վանք են շինել, խելքի աշեցեք։

Քաղաքում կառուցված եկեղեցիներից յուրաքանչյուրը հետաքրքիր ու սիրելի էր գյումրեցու համար յուրովի, բայց ահա այս մեկը՝ Ամենափրկիչը, բոլորովին ուրիշ էր…

Վիրավոր ու խոշտանգված այս «գեղեցկուհին» համարվել է նախ՝ ցարական, ապա Խորհրդային Հայաստանի ամենաբարձր եկեղեցին /48մ/։ Գյուրեցիներն իրենց բնավորության համաձայն, ցանկացել են ունենալ «ամենամեծ ու ամենաբարձր ժամը», դրա համար հանգանակել են գումար, ծախսվել է վաթսուն հազար ռուսական ոսկի, շատ բանվորներ անվարձ են աշխատել, որ «ամենաբարձր ժամը սարքեն։ Քանի որ գրունտը վատն էր, միակ եկեղեցին է, որի համար կառուցվել է նկուղային հարկ՝ կամարներով, որի պատերի հաստությունը 4 մ է։ Նկուղը պատերազմի տարիներին ծառայել է որպես ռումբապաստարան։

Սբ. Ամենափրկիչը, ինչպես Գյումրու շատ կառույցներ, կրում էր Անի քաղաքի միջնադարյան կառույցների ազդեցությունը, սակայն այն Մայր տաճարի կրկնօրինակը չէ, ինչպես ընդունված է կարծել։ Այն օժտված է ուրույն հատկանիշներով։ Անտիկենց Թաթոսը ամեն մի քար դնելիս ֆայտոնով գնացել է Անիի Մայր տաճար, բայց ոչ թե տեսքն է կրկնօրինակել, այլ ինժեներական լուծումները նմանեցրել։ Պատմում են նաև, որ եկեղեցու ներքին պատերն ու առաստաղը սվաղված էին հատուկ շաղախով, որտեղ կրից բացի, օգտագործված է եղել ուղտի բուրդ։

Եվ ահա խորհրդային իշխանությունների աչքից չի վրիպել այս պաշտելի կառույցը, որի գմբեթի պայթեցման նախապատրաստական աշխատանքներն էին կատարվում 1937թ. ամռան մի արևոտ ու լուսաշող օր։

Զինվորներից երեքը դժվարությամբ մագլցում էին վեր, որպեսզի հասնեն մեծ գմբեթի մեծ խաչին։ Երբ հասան խաչի փեշերին, իրենց հետ քաշ տված մետաղյա մեծ օղերով հսկայական շղթա սկսեցին փաթաթել խաչի փեշերին ու ամրացնել։ Այդ շղթայի մյուս ծայրը, որը գտնվում էր գետնին, զինվորները սկսեցին ամրացնել եկեղեցու մոտ կանգնած տանկի հետին մասին։ «Աշխատանքներն» ավարտելուց հետո տրվեց հրամանը։ Տանկը շարժվեց՝ իր հետ ձգելով հսկայական շղթան՝ խաչը պոկելու և գետին տապալելու նպատակով։

Սակայն կատարվեց հրաշք. ոչ թե խաչը պոկվեց (մնաց վեհ կանգնած), այլ այդ հաստ ու ամուր շղթան կտրվեց և մոտ 2մ երկարությամբ մնաց խաչի փեշերին՝ կպած-կախված հուսահատ տարուբերվելով։ Շղթան ճռճվում էր որպես անաստվածների ամոթի ու պարսավանքի փողկապ։

Շղթայի պոկված մասը դղրդոցով, շառաչելով, ահավոր աղմուկով գահավիժեց ցած, տապալվեց գետնին և անաստվածների ոտքերի մոտ առաջացրեց մի հսկայական մետաղյա բլուր։ Այդ պահին տարածքով մեկ սփռվեց ու երկինք բարձրացավ հավաքվածների ճիչը, զարմանքն ու Աստված կանչելու ձայները։ Նրանց ձայներին միացան նաև եկեղեցու կառուցող-ճարտարապետ Անտիկյան եղբայրների գոհունակության ճիչերը…

Այդ անհաջող փաստը կատաղեցրեց անաստված դահիճներին։ Նրանք անցան եկեղեցու գմբեթի պայթեցման բուն գործին։ Զինվորները նորից վեր բարձրացան՝ իրենց հետ տանելով հսկայական քանակով պայթուցիկներ։ Հասան փոքր գմբեթին և պայթուցիկները տեղադրեցին նրա սյուների չորսդին։ Ապա տրվեց հրաման։ Պայթուցիկները գործեցին, և գմբեթի երեք սյուները շառաչելով տապալվեցին՝ մի մասը եկեղեցու վրա, մյուսը՝ գետնին։

Սակայն սյուներից մեկը մնաց կանգուն՝ իր գլխի վերևում մեծ հպարտությամբ պահելով գմբեթը։ Նորից լսվեցին ճիչեր ախ ու վախեր, լաց, անեծք, աղոթք, բայց սյունը չէր ճոճվում, չէր երերում և մեծ տոկունությամբ պահում էր գմբեթը։

Այս անգամ անաստվածները ավելի կատաղեցին և հրամայեցին՝ որքան, որ պայթուցիկ են բերել, ամբողջը տեղադրեն այդ ըմբոստ, կանգուն սյունի տակ և պայթեցնեն։ Նրանց հրամանը ստորաքարշ ենթակաները կատարեցին։ Հպարտ ու ըմբոստ սյունը իր գլխի վերև պահած գմբեթով դղրդոցով տապալվեց գետին։ Իսկ անաստվածները հայհոյելով հեռացան… (տե՛ս նույն տեղը, էջ 45-46)։

Պայթեցվեց գմբեթը, իսկ եկեղեցու ճակատագիրը ի՞նչ ընթացք ունեցավ։

Սովետական կարգեր։ Երկրում մոլեգնում էր սև տեռորը։ Շարքային քաղաքացիների, հայրենասեր մտավորականների հետ մեկտեղ աքսորվեցին և աքսորներում սպանվեցին, անգերեզման մնացին շատ հոգևորականներ։ Քանդվեցին և պայթեցվեցին շատ եկեղեցիներ։ Կանգուն մնացածներից շատերը, այդ թվում նաև «Ամենափրկիչ»-ը, պահեստի վերածվեց։ Եկեղեցական հազվագյուտ հարստությունները հափշտակվեցին, յուրացվեցին։ Հավատացյալ ժողովրդին՝ մահվան սպառնալիքով ստիպում էին մոռանալ անցյալը, լռել և դառնալ անաստվածներ։

1937թ., սև թվական՝ «Ամենափրկիչ» եկեղեցին հիմնահատակ խորտակելու համար բերված հսկայածավալ պայթուցիկներով հազիվ կարողացան պայթեցնել փոքր գմբեթը և դուռը փակեցին կախովի մեծ փականով։

Լենինականի հավատացյալները շշուկով խոսում էին, որ դռան բանալին գտնվում է Ազգային անվտանգության ծառայության պետի գրպանում…

Այդ տարիներին Լենինականում էր գտնվում զինված ուժերի «կոնի դիվիզիան» (բատալյոն)՝ իր մեծաքանակ ձիերով։ Ձիերին կերակրում էին գարով։ Խնդիր էր առաջացել գարին պահեստավորելու։ Կային մի շարք առաջարկներ, բայց միաձայն անցավ մի անաստվածի առաջարկ՝ «Ամենափրկիչ»-ը դարձնելու գարու պահեստ։ Այս դեպքում էլ առաջացավ մեկ այլ խնդիր՝ ինչ անել առաքյալների նկարները, չէ՞ որ երբ գարին վերջանա, նրանք նորից կերևան արդեն իրենց մեղադրող հայացքներով։ Նորից եղան առաջարկներ, բայց անցավ ամենադաժան առաջարկը՝ ներկի հաստ շերտով ներկել և ոչնչացնել նկարները։ Այդ անաստված գործը հանձնարարեցին երկու ռուս զինվորների (երևի իրենց ամենահավատարիմներին)։ Այդ մասին իմանում են եկեղեցու շրջակա թաղամասում բնակվող գյումրեցի տղամարդիկ և նրանց աչալուրջ երիտասարդ որդիները, ովքեր իրենց հմտությամբ «լեզու են գտնում» ռուս զինվորների հետ և պայմանավորվում, որ իրենք դիկտ կբերեն, նկարները կփակեն, որ չփչանա, որից հետո կարող են ներկել դիկտերը՝ որպես նկարներ։ Համաձայնության ծեսը ավարտվում է երդմամբ։ Այդպիսի որոշում ընդունվել էր նախօրոք՝ յոթ երիտասարդների և նրանց հայրերի գաղտնի պայմանավորվածությամբ և երդումով։

Ինչպես վկայում է Լենա Պետրոսյանը /ծնվ.1931թ./, որն այս իրադարձությունների ականատես Գարեգին Պետրոսյանի / ծնվ.1896թ./ դուստրն է, գաղտնի հավաքը տեղի է ունեցել իր հայրիկի տանը, որի կազմակերպիչը վերջինիս հայրն է եղել։ Այդ հավաքին մասնակցել են նաև Բրսեյենց, Նախշքարենց, Աղապապոնց, Փայլևնոնց, Արտահանցոց, Մատնիշյանների ու Տիգրանյանների ընտանիքների ավագ տղամարդիկ ու նրանց ավագ որդիները /տարբեր տարիքի/։

Պայմանավորված օրը՝ ուշ գիշերին, երիտասարդները մեծ զգուշությամբ, անխոս եկեղեցի են տեղափոխում առաքյալների նկարների համապատասխան կտրատած տասներկու դիկտեր, ամեն երիտասարդ՝ երկուական։ Տղաները զգուշորեն փակում են առաքյալների նկարները։ Գործի ավարտից հետո երիտասարդները դուրս են գալիս եկեղեցուց, բայց տարածքից չեն հեռանում, այլ, ըստ պայմանավորվածության, յուրաքանչյուրն իր թաքստոցից հսկում է և սպասում։

Լուսաբաց։

Լռություն է, վտանգ չկա։

Քիչ անց եկեղեցուն են մոտենում երկու ավտոմեքենա, մեկից իջնում են բարձրաստիճան զինվորականները, մյուսից՝ քաղաքացիական հագուստով պաշտոնյաներ, բոլորը խոսում են ռուսերեն։ Ներս են մտնում եկեղեցի։ Քիչ անց դուրս են գալիս և ցինիկ ժպիտները դեմքերին, բավարարված, ուրախ զրուցելով՝ հեռանում են։ Նրանք երևի հավատացել էին, որ առաքյալների նկարները ոչնչացված են։ Այնինչ առաքյալներն իրենց թաքստոցից ծիծաղում էին անաստվածների վրա։

Ապա սկսվում է բեռնատար ավտոմեքենաներով գարու տեղափոխումը և պահեստավորումը։

Սրբավայրը երկար տարիներ մնաց որպես գարու պահեստ։ Հայրենական պատերազմի տարիներին եկեղեցին վերածվեց հակաօդային պաշտպանության և այլ տեսակի զենքերի պահեստի։

1950թ. «Ամենափրկիչ»-ը վերածվեց պատկերասրահի, բայց առաքյալների նկարները դեռ թաքստոցում էին։ Պատկերասրահի վերածվելուց հետո լենինականցի արվեստասերների նախաձեռնությամբ և քաղխորհրդի նախագահ Սուրեն Մատնիշյանի անմիջական մասնակցությամբ եկեղեցին վերածվեց դասական երաժշտության սրահի։ Այդ տարիներին եկեղեցին հայտնի դարձավ ֆիլհարմոնիա անունով, որը կիրառելի է մինչև հիմա։ ֆիլհարմոնիա եղած ժամանակ այստեղ իրենց կատարումներով հանդես են եկել Գոհար Գասպարյանը, Լուսինե Զաքարյանը, Մստիսլավ Ռոստրոպովիչը, Վլադիմիր Սպիվակովը, «Մոսկվայի վիրտուոզներ» նվագախումբը։ Երգեհոնի տեղադրման համար պայմանագիր կնքվեց հայտնի գերմանական «Jehmlich Orgelbau Dresden» կազմակերպության հետ։ Այս տարիներին բացվում են նաև առաքյալների նկարները։

Սակայն 1988թ. դեկտեմբերի 7-ին տեղի ունեցած աղետալի երկրաշարժի պատճառով խոնարհվեց 1926թ. ավերիչ երկրաշարժը շրջանցած «Ամենափրկիչ»-ը։ Պատճառը ներսից և դրսից կապված կամարամածներն էին, որոնք երկրաշարժի ժամանակ ճռճվել էին տարբեր ուղղություններով և վնասել գմբեթը։ Գյումրեցին, երբ տեսել է փլված ամենափրկիչը ցավից ոռնացել է՝ բացականչելով.

-Աշխարհն ավերվավ, ուրեմն քաղաքն էլ չկա։

Բացի այն, որ «Ամենափրկիչ» եկեղեցին մեծ նշանակություն ուներ քաղաքի բնակչության համար, այն դարձավ նաև վերածննդի խորհրդանիշ, որովհետև այդ մասշտաբի մեծ կառույցը քանդված վիճակում հոգեբանական մեծ ճնշում ուներ քաղաքացիների համար։ Գյումրեցիները հավատում են, որ հենց ավարտվի եկեղեցու վերականգնման աշխատանքները քաղաքի ու բնակիչների «մեջքը կուղղվի»։

Խորհրդային օդաչուի արձանը Հոռոմի մշակույթի տան բակում	
Անհատական աշխատանք, բանաստեղծություն	
Մարզ *Համայնք* *Դպրոց* *Ուսուցիչ* *Աշակերտ*	Շիրակ Հոռոմ Հոռոմի միջնակարգ դպրոց Դուստրիկ Արգարյան Մուրադյան Նելլի

Խորհրդային օդաչուի արձանը Հոռոմի մշակույթի տան բակում

Անհատական հետազոտական աշխատանքը, որը ներկայացնում եմ բանաստեղծության տեսքով, նվիրված է ծագումով հոռոմցի Վազգեն Օգանեսովի (Հովհանիսյան) պատվին կառուցված հուշարձանի պատմությանը: Այն կանգնեցված է Հոռոմի մշակույթի տան բակում: Վազգեն Օգանեսովը «Խորհրային միության հերոսի»-ի կոչում ստացած նշանավոր օդաչու էր:

***

Հոռոմ գյուղում փետրվարին
Ծնվեց հայոց արի որդին:
Երբ մեծացավ, հայրենասեր որդին ելավ,
Հայրենիքի պաշտպանության գործին
անցավ:

Օդաչու էր Վազգենը մեր,
Օգանեսով շուտով կոչվեց:

Եվ նա արի, խիզախ ոգով,
Խորհրդային այն բանակը հզորացրեց,
Որ հերոսի բարձր կոչում նրան տրվեց:

Երբ Հիտլերը փորձեց փախչել,
Նա իր հզոր ինքնաթիռով
Խոցեց վախկոտ ու վեհերոտ
Ֆաշիստների հարյուրավոր:

Հաղթանակից հետո գյուղում
Հուշարձանը իր կանգնեցվեց,
Ու Վազգենը հերոսացվեց:

Բայց արձանը շատ էր անշուք,
Չուներ նույնիսկ մի հրապույր:

Մեկն արել էր ժլատություն,
Ու արձանը կանգնեցվել էր
Մեր հերոսին ոչ վայել:

Մինչև օրս այդ արձանը
Մշակույթի տան բակում է:
Կապույտ փոքրիկ մի ինքնաթիռ,
Որ չես տեսնի,
Եթե երկինք դու չնայես
Ու ծառերի մեջ չփնտրես:

Չկա նույնիսկ մի գրություն,
Որ կփաստի հերոսական մի գոյություն:

Հուշարձանի բացման օրը,
Ներկա չեղավ քաջ զինվորը,
Բայց եկել էին գյուղի մարդիկ,
Պիոներներ, հոռու-մոտիկ:

Արձանիկը ինքնաթիռի
Հիմա շատ է գունաթափվել:

Ախր, Վազգեն քաջ հայորդու ինքնաթիռը
Երբեք այդքան սարսափելի արտաքին տեսք,
Նույնիսկ խոցված ժամանակ էլ չի ունեցել:

Իսկ վերջերս արձանի մոտ
Ռուսներ են գալիս-գնում
Խոստումներով ներկայանում:
Որոշել են արձանիկը վերափոխել,
Թարմացնել ու նորոգել,
Բայց գործը դեռ չեն սկսել:

Ու չգիտեմ, թե այս տեսքը,
Ինչքան երկար կպահպանվի,
Բայց վստահ եմ, որ արձանի պատմությունը
Մնալու է միշտ կենդանի:

Խոսուն հուշակոթողը	
Խմբային աշխատանք, ֆոտո պատմություն	
Մարզ ***Համայնք*** ***Դպրոց*** ***Խմբի անվանում*** ***Ուսուցիչ*** ***Աշակերտներ***	Շիրակ Մուսայելյան Ռաշիդ Առաքելյանի անվ. միջնակարգ դպրոց «Պեգաս» Գոհար Պետրոսյան Անտոնյան Գայանե, Մինասյան Վիկտորիա, Մուրադյան Կարինե, Ղազարյան Հայկուհի, Ավագյան Լուսինե, Հեբեյան Անահիտ, Դավթյան Մարգարիտա

«ԽՈՍՈՒՆ ՀՈՒՇԱԿՈԹՈՂԸ»
ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՄԱՍԻՆ

Հայրենական պատերազմի հուշարձանը, որը տեղակայված է գյուղի կենտրոնում՝ մեր հուշարահամալիրում դարձել է մեր ուսումնասիրության առարկան, քանի որ Հայրենական պատերազմին մասնակցել են գյուղի տղամարդկանցից մոտ 300-400 հոգի: Հուշարձանի կառուցման աշխատանքները սկսվել են 1980-ականներին, սակայն այն տեղադրվել է

դրանից տարիներ հետո: Հուշարձանի կառուցման մասին լուրը իմանալով՝ գյուղում մեծ արձագանք տարածվեց: Հուշարձանի կառուցման համար հանգանակություն

կազմակերպեցին գյուղի և արտասահմանի մուսայելյանցիների կողմից։ Հուշարձանը կառուցող վարպետին գյուղում Սերոժ էին ասում, իրական անունը՝ Սերգեյ էր, քար տաշողի անունը Հովհաննես էր։ Հուշարձանի բացման հրավիրատոմսերը ուղարկվել էին բոլոր այն մարդկանց, որոնց հանգանակության շնորհիվ էլ կառուցվել էր հուշարձանը։ Նրանց մեծ մասը եկել էր։ Բացմանը հրավիրվել էին նաև Ռայկոմի քարտուղարը, Կենտկոմի մշակույթի վարիչը և այլք։ Հուշարձանի վրա փորագրված է 114-116 հերոսի անուն, որոնցից մի քանիսին ներքևում կանդրադառնանք։ Հայրենական պատերազմում գյուղից զոհվածների մի մասը թաղվել է Թամանյան թերակղզում, իսկ մնացածը մնացել են անգերեզման։

Խորհրդայի Մուսայելյանում հարսանիքների ժամանակ մի պարտադիր ավանդույթ կար, ըստ որի զույգերը իրենց հարգանքի տուրքն էին մատուցում Հայրենական Մեծ պատերազմի զոհերի հիշատակին և լուսանկարվում հուշարձանի մոտ։
Գյուղում կար նաև այլ ավանդույթ, որի համաձայն մայիսի 9-յան միջոցառումներն իրականացվում էին հուշահամալիրում։

ՀԵՐՈՍՆԵՐ

Ստորև ներկայացնում ենք Հայրենական պատերազմի մասնակից մի քանի բասենցիների մարտական ուղին։

ԱՇՈՏ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Աշոտ Թադևոսյանը ծնվել է 1918թ-ին Ախուրյանի շրջանի Մուսայելյան գյուղում։ Կրթություն ստանալուց և աշխատանքի անցնելուց հետո ծառայում է խորհրդային բանակում։ 7 տարի շարունակ՝ մինչև Մեծ Հայրենականի ավարտը, մարտնչել է տարբեր ռազմաճակատներում։

Հայ զինվորի ռդիսականը սկսվել է Մոսկվայից, ապա մեկնել է կրակագիծ՝ Կուրսկի աղեղ, որտեղ վիրավորվել է, բայց, դեռևս չապաքինված, կրկին մեկնել կրակագիծ։ Այնուհետև հաղթարշավը շարունակվել է Վարշավա, Պրագա, Ֆրանկֆուրդ և Բեռլին, ուր ազգակիցների հետ խրոխտ քոչարին թնդացրել է Ռայխստագի հրապարակում։ Պրահայի ազատագրման մարտերում ցուցաբերած խիզախության համար արժանացել է «Կարմիր աստղ» շքանշանի։

Մարտական ծառայությունների համար պարգևատրվել է Հայրենական Մեծ պատերազմի առաջին և երկրորդ աստիճանի շքանշաններով, Վարշավայի, Բեռլինի գրավման մի շարք մեդալներով: Կուրծքը զարդարած շքանշաններով ու մեդալներով վերադառնում է հայրենի գյուղ:

Բացի լավ հետագծից նա թողեց հրաշալի զավակներ, և հենց նրա դուստրը՝ Մելանյա Թաղևոսյանը, տրամադրեց այս նյութերը, այս հետազոտությունն իսկապես շատ հուշեր արթնացրեց, դուստրը այնքան տպավորված էր, որ հարցազրույցի հաջորդ օրը գալով դպրոց՝ նոր նյութեր բերեց:

ԴԱՎԹՅԱՆ ՄԵԼԻՔ

Հայրենական պատերազմին մասնակցած Դավթյան Մելիքի որդին՝ Արշալույս Դավթյանը, ներկայացնում է հորը Հայրենական Մեծ պատերազմի տարիներին: Պատմում է, որ հայրը գերի է ընկել, բայց գերության մեջ երկար չի մնացել: Նաև պատմում է, որ հայրը իր ազգությամբ ռուս ռազմի ընկերոջ հետ փորձել է փախչել: Երբնրանք փախել և անցել են Չեխոսլովակիա, տեղի գյուղերից մեկում նրանց նկատել է մի կին, ով գաղտնի կերպով բաց է արել դուռը ու նրանց ապաստան է տվել: Հետագայում Մելիքը վերադարձել է հայրենիք: Արշալույս Դավթյանի երկու հորեղբայրները՝ Սուրեն Առաքելյանը ու Արտավազդ Դալլաքյանը, նույնպես մասնակցել են Հայրենական Պատերազմին ու զոհվել են:

ՎԱԼԱԴ ՂԱԶԱՐՅԱՆ

Վալադ Ղազարյանը բանակ է զորակոչվել 1939թ.-ին 28 տարեկանում և ծառայել 941-րդ զինվորական զորամասում: Վալադ Ղազարյանը եղել է պանկոմատ, իսկ զինվորական կոչումը՝ սերժանտ, եղել է նաև ջոկի հրամանատար: Հայրենական պատերազմին մասնակցել է 1942թ. հոկտեմբերի 14-ից մինչև 1945թ մայիսի 9 ընկած ժամանակահատվածում: Ծառայել է 87-րդ հրաձգային դիվիզիայում, նաև եղել է կարմիր բանակից: Նա ստացել մի քանի վիրավորումներ: Առաջին վիրավորումը ստացել է 1942 թվականի հոկտեմբերի 29-ին աջ ոտքից: Երկրորդ անգամ վիրավորվել է 1944 թվականի նոյեմբերի 20-ին, որովայնից: Պատերազմի ընթացքում կարճ ժամանակով վերադարձել է հայրենիք, այնուհետև՝ կրկին Բեռլին: Բեռլինում Վալադի մասնակցությամբ մի փոքրիկ միջադեպ է եղել:

Վալադը Բեռլինի փողոցներից մեկում տեսնում է մի կնոջ, ով հագել էր այն վերարկուն, որն ուղարկել էր իր կնոջը: Կարծելով, թե իր կինն է, մոտեցել է նրան, սակայն պարզվել է, որ այդ կինը պարզապես համագյուղացիներից մեկն էր: Նա միանգամից հարց ու փորձ է արել ընտանիքի անդամներից, այնուհետև հետաքրքրվել է, թե ինչու է այդ վերարկուն նրա հագին, այլ ոչ թե իր կնոջ հագին: Այդ կինը պատմում է, որ Վալադի կինը այդ վերարկուն փոխել է մեկ ման ձավարով: Համագյուղացին պատմում է նաև Վալադի որդու մասին, որը այնքան ուժեղ էր, որ մի հարմածով կարող էր մի ամբողջ խմբի տապալել: Այդ դեպքից անմիջապես հետո առաջին իսկ տրանսպորտով վերադառնում է հայրենիք:

ՍՐԱՊ և ԱՂԱՍԻ ՊՈՂՈՍՅԱՆՆԵՐ, ՍԻՄՈՆ ԱՆՏՈՆՅԱՆ

Սրապ Պողոսյանը ուներ համախմբող և կազմակերպող ձիրք. Բասենի տղաներին խումբ-խումբ հավաքել է, սովորեցրել ռազմարվեստ, զենքից օգտվելու կանոններ և իր հետ տարել ռազմաճակատ: Սրապ Պողոսյանը մարտնչել է եղբոր՝ Աղասիի հետ: Ռազմաճակատում եղել են երկու տարի (1941-1943թթ.): Մարտերից մեկում, երբ Սիմոնը մեջքից վիրավորվել և ուշագնաց է եղել, ընկերները թաղել են՝ կարծելով, թե մահացած է: Ժամեր անց հասկանալով, որ իրականում մահացած չէր, հանում են փոսից և օգնություն ցուցաբերում: Այնուհետև զգալով, որ այլևս մարտունակ չէ, ուղարկում են տուն: Աղասի Սրապյանը, կորցնելով թևը, ևս ուղևորվում է հայրենիք: Երբ Սիմոնին տեսնում է տանը, զարմանում է, քանի որ ինքն իր ձեռքերով էր թաղել եղբորը: Սիմոնի վկայությամբ՝ գյուղի այն տղամարդկանց մարմինները գյուղ չեն հասել, միայն ծանուցում է եկել նրա մահվան մասին:

Կոուգ	
Անհատական աշխատանք, պաստառ	
Մարզ ***Համայնք*** ***Դպրոց*** ***Ուսուցիչ*** ***Աշակերտ***	Շիրակ Գյումրի Ռաշիդ Առաքելյանի անվ. միջնակարգ դպրոց Լաուրա Գրքիկյան Սահակյան Արտաշես

Այս պաստառի վրա ներկայացված է նախկին Լենինականի Աստղի և մեր օրերի Շառլ Ազնավուրի հրապարակների փողոցների անունները աստղի վրա։



Իսկ աստղի շուրջը ներկայացված են այդ փողոցների նկարները և այն մարդկանց նկարները, ում պատվին են անվանափոխվել այդ փողոցները։ Նաև պաստառում կան այդ անվանափոխությունների որոշումները։

ՈՐՈՇՈՒՄ

«18» հունիսի 2013 թվականի N 63 -Ա

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 21-րդ կետով, 32-րդ հոդվածի 15-րդ կետով, ՀՀ Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր-մարմին սահմանելու մասին» N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի II բաժնի 8-րդ մասով, հիմք ընդունելով ՀՀ Շիրակի մարզպետի տեղակալի 2013 թվականի 03-ի N02/10.1/1983-13 գրությունը և Արտաշես Վասիլյանի ժառանգների գլխավոր խնդրանքը՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Անվանափոխել Գյումրի համայնքի վարչական տարածքում գտնվող «Կոմսոմոլի փողոց»-ը «Արտաշես Վասիլյանի փողոց», «Կոմսոմոլի փողոց 1-ին նրբանցք»-ը՝ «Արտաշես Վասիլյան» փողոց 1-ին նրբանցք»։

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Անգնահատելի և անձնազոհ նվիրման և ունեցած մարդկային բարձր արժանիքների համար նախկին ԽՍՀՄ նախարարների խորհրդի նախագահի առաջին տեղակալ Բորիս Եվդոկիմի Շչերբինայի անվամբ անվանակոչել Գյումրի քաղաքի Ռեպինի փողոցը։
2. Դիմել Ոստիկանության Գյումրու բաժնին /պետ Վ.Ց.Սաղաթելյան/ իրականացնելու վերը նշված փողոցի բնակիչների անձնագրերում համապատասխան փոփոխություն կատարելու գործընթացը։
3. Սույն որոշումը հրապարակել մամուլում և հեռուստատեսությամբ։
4. Հանձնարարել քաղաքապետարանի բնակկոմունալ տնտեսության և շրջակա միջավայրի պահպանության բաժնին /պետ. Հովհ. Գրքիկյան/ լուծել փողոցի անվանափոխման ցուցատախտակների պատրաստման և տեղադրման հարցը։

Գյումրի քաղաքի փոխակերպումները Անտառավան թաղամասում խորհրդային և հետխորհրդային տարիներին	
Խմբային աշխատանք, առցանց գիրք	
Մարզ ***Համայնք*** ***Դպրոց*** ***Ուսուցիչ*** ***Խմբի անվանում*** ***Աշակերտ***	Շիրակ Գյումրի Գյումրու թիվ 15 հիմնական և թիվ 1 ավագ դպրոցներ Լաուրա Գրքիկյան «Կոուգ» Ավդալյան Սիրանուշ, Ալեքսանյան Աիդա, Համբարձումյան Նարինե, Հակոբյան Սուսաննա, Մինասյան Նվարդ, Մուրադյան Բորիս, Սահակյան Արտաշես, Սեքսենյան Սարգիս

Ելնելով ձևաչափի առանձնահատկությունից՝ աշխատանքը ներկայացված է առանձին որպես «հավելված 1»: (տես աշխատանքը նույն բաժնում)

Գագարինավանի խորհրդային և հետխորհրդային ժամանակաշրջանի հիշողության լանդշաֆտը	
Խմբային աշխատանք, սահիկաշար	
Մարզ ***Համայնք*** ***Դպրոց*** ***Ուսուցիչ*** ***Խմբի անվանում*** ***Աշակերտ***	Գեղարքունիք Սևան Յակով Զարոբյանի անվ. N 2 հիմնական դպրոց Լուսինե Ղարիբյան «Փյունիկ» Խառատյան Ռոբերտ, Առաքելյան Մարիամ, Պետրոսյան Նելլի

Հղումը՝

Ելնելով ձևաչափի առանձնահատկությունից՝ աշխատանքը ներկայացված է առանձին որպես «հավելված 2»: (տես աշխատանքը նույն բաժնում)